

ԱՌԱՔԵԱԼԸ *)

Թ

Շուտով հասաւ այստեղ և տանուտէրը: Դա միջահասակ, ամրակազմ, խոշոր դիմագծերով, խելացի աչքերով և բարեգէմ մի մարդ էր: Տան պատին լինելով ձեռքի երկփանին, որով հենց նոր խոտ էր հաւաքել դաշտում, հանց գլխակապ թաշկինակը և նրանով ծոծրակի ու ճակատի քրտինքը սրբելուց լետոյ՝ մօտեցաւ հիւրին, քաղցրաժպիտ ողջունեց, և, չընայելով որ նրա ունի և ո՞ր տեղացի լինելը չը գիտէր, այսուամենայնիւ, սկսաւ հարցնել նրա առողջութիւնից, ուղևորութեան հանգամանքներից և ընդհմին յայտնել իւր շնորհակալութիւնը որ պատիւ էր արել՝ իւր տանը հիւր լինելու:

Կամսարեանն իւր կողմից հարկ եղածը պատասխանեց, յայտնելով նրան իւր ունի և ո՞րտեղացի լինելը և ապա բացատրեց որ ճանապարհորդելու նպատակով է որ գտնուում է այժմ Զիբուխլուում:

— Մեր գեղին շատերն են ընցնում դառնում էթում Երևան, Յէջմիածին, եւ էն տեղից գալում յիջնում Դիլիջան ու ուրիշ եւաներ (կողմեր) համա ըսկի մէկն էլ չի կայնում (մնում) էս գեղը: Էս մէ ջոկ պատիւա որ արել ես մեզի... խօսեց տանուտէրը պարզութեամբ Բայազտեցուց բարբառով ¹⁾:

*) Յե՞ն Վոսմաթ 1902 Ն 4

¹⁾ Զբուխլուեցիները գաղթած են հին Բայազտի կողմերից (Արծալիից):

— Ինչո՞ւ չեն մնում այստեղ. հետաքրքրուեց երիտասարդը:

— Ընդուր վոր մեր կուշտ (մօտ) տենալու դատ չը կայ:

— Սյս, ձեր գիւղը շատ խղճուկ բան է, նկատեց Պետրոսը:

— Հմմէն (ամեն) գեղերն էլ էսենցին, լարեց տանուտէրը:

— Սխալուում էք: Քիչ առաջ անցալ Սեմեօնովկայի միջով և նա բոլորովին ուրիշ գիւղ երևաց ինձ: Այնտեղ կային սիրուն տներ, լայն և ուղիղ փողոց. ծառեր, ծաղիկներ, բանջարանոցներ. իսկ ձեր գիւղն... այս քնչ է. կարծես շէն չէ, ալլ աւերանոց:

— Ղորթ ա հրամանքդ. Սիմեօնովկում քո ասած հմմեն բան էլ կայ. դէ ասր էն մալականի գեղ ա, էս խայի:

— «Սա էլ նոյնն է ասում, ինչ որ կառապանը՝ մըտածեց Կոմսարեանը մի առանձին գոհութեամբ և ապա հարցրեց. — ուրեմն հայի գիւղը չի՞ կարող լաւ լինել:

— Ռէ իմա՛լ (ի՞նչպէս) ըննի լաւ. գեղ ա քլի. գեղ դհալ (ուրիշ կերպ) իմա՛լ կըննի:

— Հեր-օրհնուած, Սեմեօնովկան էլ գիւղ չէ:

— Հրամել էք, գեղ ա:

— Էհ, նա քնչու է լաւ:

— Սաի էլի, ընդուր վոր մալականի գեղ ա:

— Ուրեմն որ հայի լինէր պէտք է վատ լինէր:

— Հալբաթ որ (ի հարկէ):

— Ինչո՞ւ.

— Ընդուր վոր խայն հմմէն բանի մէջ անշնորհք ա:

— Ուրեմն, հայոց գիւղերն ամեն տեղ էլ նման են ձերինին:

— Խա, էդենց ա:

—Ամեն տեղ էլ այսպէս չոր, ցամաք, ծուռումուռ փողոցներով, հողէ տնակներով, կեղտոտ բակերով:

—Խա, հրամե՛լ էք:

—Եւ չի՞ գտնուիլ հայ գիւղ, որ ծառազարդ լինի. ուղիղ փողոցներ, սիրուն տներ, այգիներ, ծաղկանոցներ և այլ այս տեսակ բաներ ունենայ:

—Ի՞նչ տեսմ. կըլնի վոր պատալի խարերի (հարել-րի) մէջ մէ խտտ. համա էն էլ հրամանքիդ ասածի նման չըլնի. ծուռումուռ բաներ շատ կըլնի: Ի՞նչ ասեմ. կըլնի վոր ըլնին էլ ինննց գեղեր որ բակերի մէջ մէ քանի խատ ծառ ըլնի, եա բոստան, եա մէ պտիկ բախչայ. համա տներն ու քուչէքն ինննց կըլնի իմալ մերն ա: Ես շատ տեղեր եմ հելէ. շատ խալի գեղեր եմ տեսե. մերնից փսերն (վատերն) էլ շատ կան:

Այս տեղեկութիւնները, կարծես, գիւր էին դալիս Կոմսարեանին, որովհետեւ նա նրանց մէջ պտրում, որոնում էր մի բան, որը գուցէ հարկաւորուէր իրեն մօտիկ ապագայում, ուստի շարունակեց հարցովործը:

—Այսուամենայնիւ, տանուտէր, դու գուցէ կարողանաս աւելի ճիշտ պատճառն ասել թէ՛ ինչո՞ւ մալականի գիւղը գեղեցիկ և մաքուր է լինում, իսկ հայի-նը՝ տգեղ ու կեղտոտ: Անկարելի է որ դրա պատճառը հայի անշնորհքութիւնը լինի. մի՞թէ բոլոր գիւղերում էլ հայերն անշնորհք են լինում:

Տանուտէրը մի վայրկեան մնաց լուռ և չըգիտէր ի՞նչ պատասխանել: Յետոյ՝ կարծես նոր գիւտ անելով՝ բացադանչեց.

—Ախպէր, խալի գեղն կեղտոտ չըլնի, իմալ ըլնի. խալի գեղցու ցաւը, գարդը մէ չէ, երկու չէ, վոր թոր-գի (թողնէ) ու լիստակութենի ցաւը քաշի: Ախար նա ըսկի անշնորհ էլ չէ. թէ կուղ էդ անուըն տուի քեզ յառէջ: Նա մալակնից էլ ա շնորքով, իրա մէկէլ տրկեցից էլ: Խալի գեղցու ցաւն էն ա որ մէջը մարդ չըկայ..

մէջքին դայաղ (նեցուկ) տուող չըկայ. ինչ որ աթա-
տան, բաբատան (հօրից, պապից) տեսե, սովրե, ինեց
էլ անուամ ա. ինեց էլ ապրում աւ Քարճինի ծառ (վայ-
րի տանձի) տեսած կան. էն որ մէջէն ա հլնում. էն
որ թորգեն (նրան որ թողնեն) խարիւր տարի կապրի,
հմէն վախտ էլ պատիկ-պատիկ չոր ու ցամաք քարճին
կըրայ, համա թէ մէ բարի ձեռ նրա ճղերը կտրի ու
վրէն պատուաստի մալաչի դալար շվիւր (շիւղ), կըտէնաս
մէ երկու տարուց յետոյ, էդ քարճինի ծառը մալաչի
տանձեր կը բերա, խամով, խոտով ու կերածդ վախտն
էլ բէրնիտ ջուրը կէթայ. Մեր գեղցին էլ որ կայ մէջի
ծառա, քոթուկը (բուն) խաստ, քոքերը (արմատները)
դայիմ, համա բարը (պտուղը) քարճինա. մէ ուտա
ձեռա պէտք, որ ճղերը կտրի, վրէն պատուաստ անի,
կուգես մեղրիկինի, կուգես գիւլ-աբի, էն վախտն էլ
ընդու բարն էլ էն կըլնի ինչ վոր պատուաստելիս, խա-
մով խոտով, սիրունութենով: Մալականը որ կայ պա-
տուաստած ծառ ա, վորնա ընդու պատուաստողն, չիմ
գինիայ. համա տէնում ենք բարը խամով ա: Հէնա
Գեաջու եանն էլ նէմեցներ կան, ընդոնք էլ մալակնե-
րից են շնորքով, էրևումս ընդոնք էլ են պատուաստ արած,
ընդուր վոր ընդոնց արած բաներն էլ են դայգով (կար-
գին) լաւ, ընդոնց գեղն էլ ա թամուղ-լիստակ, ծառով
լիքը, վարժատունը մէջները, ժամն էլ (եկեղեցի) պայ-
ծառ, բոստան ու բաղչէն դէմներն...: Մեր գեղը ը-
գենց բաներ չըկան... ընչի, ընդուր վոր էն օր, վոր օ-
րուանից Աստուած մի ծառա տնկե, անունը խալի շի-
նական զրե, էն օրուանից դէսը էդ ծառի ճղերին մի ճղա-
դող (յոտոց) չի դիպե, խաղար տարի ումբը ա քաշե (ապ-
րել է), խաղար տարուայ բարը հմմէն վախտ քարճինա
հէլե ու քարճին: Մալականը ինչ վախտ որ ուզում ա
գեղ քցի, եա թէ չէ իր խամար շէնլիկ շինի, մէկէլ տէ-
նումես հմմէն եանից մարդիկ են բսնում, ասում են

բարեկամ, էս էսենց շինա. էն ընենց շինա, եա ծուռա
դրըստի, էն պատիկ ա ջոջացրու (մեծացրու), մի խօս-
քով խորհուրդ տալում, խելքում-խրատում, գլխու քը-
ցում: Մալականն էլ բարի խրատն ընդունումա, չը գիտ-
ցածը սովորում, ու բանը անում ինենց, վոր Ասծուն
էլա դուր գալում բանտին էլ (մարդկութեան): Համա
խալի շինականը շէնլիկ չէ, թէկուղ ժամ էլ քցի, ըսկի
մէ վախտ մէ մարդի էրես չի տենա, որ մի բարի բան
սովորցնի, մէ դրուստ ճամբաղ նշանց տալ, ծուի զարարը
(վնասը) ու դրըստի օգուտը խասկցնի. հդու խամար
էլ իմալ հինքն կարցե, ինենց էլ արե, ինչ խելքն կըտ-
րե, էն էլ շինե. էհ, ընդու գիտցածն է հէլե էն, ինչ
վոր տէնում ես, ընդուր իմալ մեղենք (մեղ դնենք):

Կամսարեանի գլխին, կարծես, ջուր մաղեցին, իւր
հարցին նա չէր սպասում այս օրինակ պատասխան: Դա,
խկապէս, գատապարտութեան մի վճիռ էր, որ տա-
նուտէրը կարդաց իւր երեսին: Ախար չէ որ այն
ամենը, ինչ այդ գիւղացին ասաց, յայտնի էին ի-
րեն վաղուց: Չէ որ հենց իրենց ընկերական ժողով-
ներում լաճախ այն միտքն էր արծարծուել թէ՛
հալ գիւղացին տգէտ, յետամնաց, հետևապէս և
թշուառ է մնում այն պատճառով, որ բոլոր իւր կեան-
քում զուրկ է մնում առաջնորդից, սրտացաւ խորհրդա-
տուից, բարի օրինակից: Լինէին դրանք և նա կազա-
տուէր դարերի ընթացքում իւր վրայ բռնացող ճակա-
տադրական թշուառութիւնից: Արդ, ինքը եկել էր այդ
առաջնորդը, այդ խորհրդատուն լինելու: Ինչո՞ւ էր, ու-
րեմն, երկար ու բարակ տանուտէրին հարցափորձում:
Չէ որ նրա համար որ իւր դրած ուխտն այժմեանից
արդէն ծանր էր թւում իրեն և նա նրանից կամենում
էր խուսափել....:

Այս յետադարձ միտքը ձգեց երիտասարդին վարանքի
մէջ. խղճի մի թագուն խալթ սկսաւ անհանգստացնել

նրան, ուստի դադարեց հարցեր առաջարկելուց:

Այդ միջոցին վերադարձաւ տան տիրուհին՝ ձեռքին մի քանի նորաթուխ լոշեր: Ըստ երևութիւն, նա այդ օրը թափալ հաց չունենալով՝ ըստ գիւղական սովորութեան՝ փոխ էր առել հարւանից, որպէս զի նորեկ հիւրին օթեկ հացով չը կերակրէ, որ, ի հարկէ, ամօթ բան էր իրենց ըմբռնումով: Տանուտէրը կնոջը տեսնելուն պէս՝ վեր թռաւ տեղից, ինչպէս մեծ յանցանք գործածին մէկը:

— Ներողութիւն աղա, ասաց նա, ախր դու ճափխից ես գալում, անօթի կըլնես. ես դինջ նստեցեմ, քե խետ գեալաջի (զրոյց) իմ անում: Դէ, Սալվի, շուտ արա խացի թաղարէք (պատրաստութիւն) տես, դարձաւ նա դէպի կինը, որ արդէն մտնում էր տուն:

— Մի՛ նեղանաք, խնդրում եմ. ես քաղցած չեմ, ճանապարհին նախաճաշել եմ, հանգստացրեց երիտասարդը տանուտէրին: Բայց վերջինս, այսուամենայնիւ, կնոջ ետևից մտաւ տուն, որպէս զի հիւրին պատուասիրելու համար՝ հարկ եղած պատուէրը տալ կնոջը, կամ թէ՛ նրա հետ մի խորհուրդ անէ:

Այսպիսով Կոմսարեանը միայնակ մնալով՝ սկսեց լսածներն մասին լրջօրէն մտածել: Այս առիթով նա նորից լիջեց անցեալը, ուսանողական ժամանակի փափաքած մտքերը, իւր ոգևորութիւնը, խիզախ որոշումը և այդ ամենին իրականութիւնը հակադրելով, եկաւ այն եզրակացութեան որ ինքն սխալուել է, թեթեւ աչքով նայելով առաջադրեալ խնդրի վրայ, կամ. սպասելով որ գործը դիւրութեամբ սկսուի և դիւրութեամբ շարունակուի:

— «Այստեղ հաստատուն կամքի հետ միասին պէտք է ունենալ, նաև, մեծ համբերութիւն, խօսեց նա ինքն իրեն. — Ճառից՝ ծառատակը միշտ մօտ է երևում, բայց երբ թռչում ես՝ այն ժամանակն է միայն տարածու-

Թիւնն իմացուում: Մինչև այժմ ես դեռ թուշելու որոշումն եմ արել և արդէն տարածութիւնն անհուն է թուում. ի՞նչ կը լինի եթէ սկսեմ թուել... արդեօք ուժերս կըներեն. թեւերս չեն թուլանար....

Այս մտածութեան հետ միասին անսպաս տեղից ծնունդ առաւ նրա սրտում պատուասիրութեան զգացումը. — «էհ, ամօթ է վերջապէս փոքրոգի լինել այսքան և վախենալ կեանքի գալոց զրկանքներից... Այս գիւղացիներն էլ մարդիկ են և ահա ապրում են զրկանքներով լի այդ կեանքով և չեն մեռնում: Ինչո՞ւ ուրեմն չը փորձեմ մի փոքր էլ ապրել նրանց հետ և նրանց նման. գուցէ հենց այդ փորձի մէջ գտնում եմ ես հնարն եմ խոստման տէր մնալու: Ինչո՞ւ յուսահատուել դեռ ոչինչ չը գործած, դեռ ուժերս չը փորձած»....

Այսպէս մտածեց Կամսարեանը տանուտէրի խօսքերի թարմ ազդեցութեան տակ և որոշեց անպատճառ «փորձել» իւր ուժերը:

Այդ որոշումն անկեղծ էր. անձնասէր լեռն էր ձայնը լուել էր նրա մէջ այդ ըրպէին:

Բայց հենց այդպիսի մի հանդիսաւոր վայրկենում սրահի առաստաղից թափուեց երիտասարդի գլխին չոր հողի մի վիժակ: Նա վեր թռաւ տեղից և վազեց դէպի բակը, կարծելով թէ՝ առաստաղը փլչում է գլխին: Բայց այդպիսի բան չը կար: Հաւերը կտրանը քթուլթ էին արել, որով և հողի փխրուկ մասը շարժուելով իջել էր ներքև: Կամսարեանը հանեց լայնեզր գլխարկը և տեսաւ որ նա ամբողջապէս ծածկուած է փոշու հաստ շերտով. իսկ գլխարկի եզրը պահել էր իւր վրայ հողի մեծ քանակութիւն:

Մաքրասէր երիտասարդը դժգոհ եղաւ այդ բանից: Բայց ի՞նչ արած. դեռ մի ըրպէ առաջ էր որ նա որոշել էր՝ փորձել, ապրել գիւղացիների հետ: Պէտք էր աւրեմն համբերել: Բայց որովհետև համբերելուց անկախ՝

անհրաժեշտ էր մաքրել գլխարկը, նոյնպէս և վերնագլխոտը, որի ուսերը ևս ծածկուած էին փոշիով, ուստի նա վերադառնալով սրահը, կանչեց տանուտէրին և խընդրեց նրան՝ առաջնորդել իրեն դէպի ներսի տունը, որպէս զի այդտեղ գտնուող իւր պայուսակից հանէ նա խոզանակը՝ հագուստը մաքրելու համար:

— Էս քնչ ա, խող ա թափե վրէդ... Էլ Սալվի, էս քնչ ա, էլի էդ անիծուկ խաւերը կտուր քըճըճում են, յիշկայ (նայլը) աղի չորերն հմէն խաւար են արե:

Սալբին դուրս վազեց դէպի կտուրը՝ հաւերին հալածելու, իսկ երիտասարդը ներս մտաւ իւր պայուսակը որոնելու:

Տունը, ուր նա մտաւ տանուտիրոջ առաջնորդութեամբ, մի տարօրինակ շէնք էր, որի նմանը նա չէր տեսած ոչ մի տեղ: Իւր քառակուսի ձևով՝ դա նմանում էր մի սովորական ընդարձակ սենեակի, իսկ չորս սիւների վրայ բարձրացող գմբեթարդ առաստաղով՝ փայտաշէն մատուռի: Շէնքը ոչ մի կողմից պատուհան չուներ և լոյսն ստանում էր սուսստաղի վրայ բացուած երդիկից: Սակայն այդ լոյսն էլ այնքան էր նուազ որ երիտասարդը ներս մտնելուց՝ չկարողացաւ իսկոյն որոշել բնակարանի ձևն ու մեծութիւնը: Միայն քիչ յետոյ, երբ աչքերը վարժուեցան, սկսաւ սմեն ինչ դիտել ուշադրութեամբ:

Տան ետեւի պատն ամբողջապէս, իսկ աջ ու ձախ կողմերինը՝ կիսով չափ կտրուած էին հողից և այն՝ այնչափ տգեղ ձևով որ շատ տեղերում երևում էին սակրի կամ բրի քաշած ակօսները: Իսկ առջևի պատը և աջ ու ձախ կողմերինը մասամբ շինուած էին կրաշաղախի և գետաքարերի անարուեստ զանգուածով: Ինչպէս տան չորս պատերը, նոյնպէս և առաստաղն ու նրան բռնող փայտէ չորս սիւները ծուխից սևացած էին այն աստիճան որ շատ տեղ փայլում էին լուսի ա-

ռաջ: Առաստաղի աւելի մութ խորշերը առատօրէն բռնուած էին սարգի ոստայներով: Երևում էր որ այդ տան մէջ չըկար մի չար ձեռք, որ վրդովէր այդտեղ ապրող սարգերի խաղաղութիւնը:

Տան մէջ եղած կարասիներն էին. մի փայտէ, ծր-խաճար ամբար, որի մէջ ալիւր էր պահուում. մի մեծ, կաւածեփ կթոց, որ ցորենի պահարանն էր. մի փայտեայ խարիտուլ և լայն մահճակալ, որ ծառայում էր իբրև դարակ, թէ տան մէջ գտնուող արկղիկների և թէ հնամաշ կողինքի ու օթոցների համար: Պատերից մէկի տակ գտնուում էին՝ երկու հողէ կուժեր, մի քանի սեացած պտուկներ, մի փոքր և մի մեծ տաշտակ և երկու փայտեայ խաներ: Իսկ դրանք հանդէպ գլխուղ պատի տակ, որ, ըստ երևութին, պատուաւոր կողմն էր, շինուած էր մի հողէ բարձրութիւն՝ տախտի ձևով, չորս կողմից կաւածեփ և ծածկուած հնամաշ կապերով: Տան յատակը հողից էր, տեղ տեղ՝ փոս և ցեխոտ լինելու չափ թաց: Հենց այդ յատակի վրայ, ուղղակի երգիկի տակ գտնուում էր կրակարանը, ուր այդ միջոցին վառուած տթարի վրայ դրուած էին մի հողէ պտուկ և մի պղնձէ կաթսայ, երկուսն էլ այնպէս սև և մրսպատ որ կարծես ածուխից էին շինուած: Ի՞նչ էին եփում այդ սևակոլոյ ամաններում, յայտնի չէր. միայն թէ Պամսարեսնը նայելով նրանց վրայ՝ զգաց մի խոր զգուանք և դրա հետ էլ երկիւղ թէ՛ մի գուցի նրանց մէջ պատրաստուած կերակրով հիւրասիրեն իրեն:

Որովհետև տան միջի օդը տոգորուած էր աթա-րից առաջացող զարշահոտ ծուխի, այլ և խոնաւութեան անախորժ հոտով, ուստի երիտասարդը այդտեղ չբացաւ պայուսակը, որպէս զի ստիպուած չըլինի մի քանի վայրկեան աւելի ծծելու ապականուած օդը, այլ առնելով այն՝ տարաւ դուրս:

Հանելով պայուսակից սպիտակ մագից և արծաթէ մէջքով շինած խոզանակը, որ բնաւ չէր յարմարում ջրջապատող անմաքրութեանց, նա սրբեց նախ գլխարկը և ապա հանեց վերնագգեստը: Վերջինս մաքրելու ժամանակ գրպանից գետին ընկաւ իւր Note-երի յայտնի տետրակը: Կամսարեանը վերցրեց այն այնպէս շտապով որ կարծես թէ՝ գողացած իր է, որը պէտք էր իսկոյն թագցնել: Որովհետեւ տետրակի տեսքը վայրկենաբար լիշեցրեց նրան այնպիսի բաներ, որ նա կուզէր այժմ մոռանալ....:

Երբ երիտասարդը բոլորովին մաքրուեցաւ, եկաւ նստեց սրահում դրած տախտի մի ուրիշ կողմը, որ իւր կարծիքով ազատ սրտի լինէր հողի իջուածքից և ըսկսաւ խօսել տանուտէրի հետ, այժմ արդէն մեծ սըրտով:

— Ի՛նչ առաջ ասում էիք թէ՝ հայ գիւղացին ի՛նչ անի. միջումը մարդ չունի, մէջքումը դայեաղ չունի, բան սովորացնող չունի և այլն: Ասացէք, խնդրեմ. այսպիսի մի պարզ բանի համար ձեզ ի՛նչ սովորացնող է հարկաւոր — տեսնո՞ւմ էք, այս առաստաղի ձողերը շաւել էք միմեանցից մի մի թիզ հեռու, յետոյ վրան ցախ ու ցաք դնելով՝ հող լցրել: Մի՞թէ չէիք կարող նախ այս ձողերի փոխարէն լայն տախտակներ շարել, երկրորդ՝ եթէ ձողեր էիք շարում, ընտրէիք ուղիղ ձողեր և ոչ թէ այս ծուռ ու մուռ ճաղերը. յետոյ նրանց տաշէիք, միմեանց մօտեցնէիք և ապա թէ վրան հող լցնէիք: Այն ժամանակ հաւ չէ, անասուն էլ որ ման գար կտրանը, հողը չէր թափուի: Ախար սա այնքան պարզ բան է, որ սրա համար ոչ սովորեցնող է հարկաւոր, ոչ խորհրդատու:

— Շատ զորթ ես հրամայում, աղա. խօսել սկսաւ տանուտէրը. զորթ վոր էն ձողերի տեղ որ տախտակ հըլնէր շատ լաւ կըլնէր, համ խող չի թափուի, համ

էլ լաւիքը (առատաղը) սիրուն կըլնէր: Համա մի բան կայ վոր դու չես գինա. շինականի խամար մէ մանէթը կնդդայ ափի, ինչդդայ քաղցցու խամար խարիր մանէթը: Էսդդա տեղը տախտկելու խամար եռսուն մանէթ խէրիք չէր գայ, համայ ես էս հմմէնին չորս մանէթ եմ տուե, էն էլ անշախ եմ ճարե: Զողերն էլ որ մօտիկ մօտիկ հլնէր խարիր խատ չէր խէրիք գայ, համա ես քառսուն խտով բանը եօլլա եմ տարե: Զողերն էլ թէ դուզեր (ուղիղներ) հլնին, մէշաբակին (անտառապետը) երեք խետ աւելի փարայ կուզէր, համա էժանա տուե: Ասենք իմ մէղաղախեցի բարեկամն աւեց դու որ չորս մանէթ փարա ես տուե բլէթին, իրաւունք ունէիր էդ բլէթով էն դդայ դուզը ձողեր կտրել, ինչ դդայ ծուռնես կտրես. համա ես գեղցի ռամիկ մարդ եմ, իմալ կանամ արէզչիկի (անտառապաշ) լաւէջ ձէն ձուն խանել. էն թղթին լիշկում ու ասում ա «էս թուղթ ծուռը փէտերի խամարա, չը լիշնաս (համարձակուես) դգերը կտրել. ես էլ իմալ ընդու հրաման չանեմ: Բանա թէ շլկում (սխալում) ես լիշնամ մէ խատ դուզը փէտ կտրեմ, մէկէլ տէնաս բռալով գալումա վրէս ու մէ չափալախ (ապտակ) քիթուբէրնիս զարկում... Հարամդադա, ասումա, էդ իմալ լիշնար թագաւորական մէշի մէջ զակօնի դէմ բան բռնել, հէսա պրատակօլ կանեմ քեզի նաբախտ (բանտ) կը տանեմ: Էդ վախտը անճարանում եմ, ոտ ու ձեռն ընկում, ասում «ադա ի սէր Աստուծոյ բախշի, ինձ բռնաւոր մի անի, ճըզերս ու օղլուշաղս մեղք են (ընտանիքը)»: Էստուց լետոյ որ տէնուեմ չեմ կանում ադա արէշչիկի սիրտը շահել, իւաջս կտրումա ջէբս էլաժ մէ բանի արասին ափնիմ դնում, գլուխս պրծցնում:

Տանուտէրի պատմածներից Պետրոսը վրդովուեցաւ. մանաւանդ արեգչիկի գիւղացուն ապտակելն ու օրէնքի անուկնով նրան հարստահարելը վառեցին երիտա-

սարգի բոլոր իրաւագիտական զայրոյթը: Նա մոռացաւ որ տանուտէրը ընդդիմախօսում էր իրեն և ոչ թէ պաշտպանութիւն խնդրում. ուստի վրդովուած բացաւ կանչեց.

— Սբեգդչիկը իրաւունք չունի քեզ ապտակելու և ոչ էլ քեզանից ապօրինի փող առնելու. այդպիսի անկարգութեան համար նրան ոչ թէ պաշտօնից կըզրկեն այլ և բանտ կընստացնեն: Որէնքը իրաւունք չէ տալիս նրան նոյն իսկ մեղաւոր մարդու դէմ բռնութիւն գործ դնել, ո՛ւր մնաց թէ հանգիստ ու խաղաղ գիւղացու դէմ: Անտառի պահպանութեան վերաբերմամբ որ և է մէկի կողմից անկարգութիւն տեսած ժամանակ, նա կարող է այդ մասին յայտնել վերակացուին կամ անտառապետին. բայց իւր ձեռքով դատաստան անել՝ նա բնաւ իրաւունք չունի:

— Կըլնի էդ հմմէն դրուստ ես ասում. ես էլ գինամ օրինքի մէջ անարթար բան չի ըլնի, համա մեզնից վո՛ր մէկս ա օրէնք խասկնում, ես թէ չէ էն զադը մէշէն մեր ձէնը ո՛վա հիմանում, մեր գանգատն ո՛վա լսում: Բան ա թէ հուջութենք անում (հակառակում) ես ահ տալում թէ կէթանք՝ մէշաբէկին գանգատ, էն իր դօշի կպած նշանը նշանց ու տալում ու ասում. էս ըզնակը տէնումեա. էս հմմէն մարդու չեն տալումեն, ինձի որ տւելեն, ընդուր խամար ա որ իմե՛լ ուզհենամ էստով անիմ, թէ կուզ սաղ աշխարը քանդեմ վո՛րը կանայ առաջս կանգնելա: Հիմի անդա, ես որ լառէջ աւեցի որ մեր մէջ մարդ չունենք, մէջքներիս դայաղ տըւող չունինք, դու ինձի մէղ իր դնում. համա տէնումես, որ քե նման մէ խատ գրի սև ու սպիտակը ճանաչող, դիւան դատաստան խասկցող մեր մէջ նստած հլնէր ու ինձի ասէր, օրէնքի մէջ գրածա՝ դու քո չորս մանէթով կարաս քառսուն խատ դուզ ծառը կտրել, թէ աբէգչիկը իրաւունք չունի քե զարկելու, պրատա-

401 շինելու, ես նաբախտ դնելու, ես էլ էն վախտ աս-
լան չը դառնայի, մէ արէշչիկ չէ, թէ կուզ տասն էլ
որ վրէս դային համէնի ջուղաբը (պատասխանը) կը տայի:
Ա՛յ էն վախտ իմ լառիքի վրա դուզը ձողեր կ'ընեն,
համէնն էլ մօտիկ-մօտիկ շարած ղայիմցրած, խողն էլ
վերեւից չէր թափուի, ես էլ պատուական ղոնախի կուշտ
սեւ էրես չէի մնայ:

Կամսարեանը լսեց այս ամենը ուշադրութեամբ և
այլ ևս գիտողութիւն չարաւ:

Ժ.

Վերջապէս տան տիրուհու ճաշը պատրաստ էր:
Նա շտապեց սեղան բանալ: Մոյգ կապտագուն մի սըփ-
ռոց, որ բաւական մաքուր էր, բայց որն իւր գունի ու
հնուութեան պատճառով կեղտոտ երևաց հիւրին, նա
փռեց տախտի վրայ և վրան դարսեց սպիտակ ու փա-
փուկ լոշեր: Ապա փայտեայ, բոլորշի խանի մէջ բերաւ
մի քանի ամաններ, որոնց մէջ կալին պանիր, կանաչ
սոխ, մածուն և եփած ձուեր: Երրորդ վերադարձին՝ նա
հանեց սեղանի վրայ նոր պատրաստած կերակուրը, որ
էր՝ լոբիի բորանի և մի եփած հաւ: Տոնուտէրն իւր
կողմից բերաւ դեղնած մի շշում օղի և հողէ դորակով
գինի:

Կամսարեանն ուտել սկսելու փոխարէն՝ սկսաւ գի-
տել ամանները, որոնցով տան տիկինը ցուցահանել էր
ուտելիքը: Նրանցից ո՛չ մինը նման չէր միւսին: Պա-
նիրը դրուած էր պղնձէ, կլայեկած ամանում. մածունը՝
հողէ գաւաթում. ձուն՝ փայտնսէ կապոյտ, հին ձևի մի
ամանում, որն ուղիղ չէր մնում սեղանի վրայ, որով-
հետեւ կոտրուած լինելու պատճառով՝ մի քանի տեղից
կսպուած և տակից կոծկուած էր: Իսկ այդ կոծիկը (կրի,
ձուի և ծեծած կանեփի շաղախ) այնքան հաստ էր քը-



սուած որ ամանն իւր հարթութիւնը կորցնելով՝ հակառակ էր մի կողմ: Վերջապէս բորանին լցուած էր հողէ քեղանի մէջ, իսկ հաւը՝ դուռած պղնձէ ափսէի վրայ:

Հազիւ տանուտէրը ձեռք առաւ օղիի շիշը որպէս զի հիւրին հրամցնէ, ահա սրահի մէջ բուսած Տէր-Վանին, գիւղի քահանան:

Սա վաթսուոնն անցած մի մարդ էր. բարձրահասակ, բայց նիհար մարմնով, նեղ ու երկար դէմքով, խոր ընկած աչքերով, դուրս ցցուած ատոսկրներով և, սակայն, հարուստ, ալեխառն մօրուքով, որ մեղմում էր դէմքի տգեղութիւնը և ծածկում երկար, դեղնած պարանոցը, որի վտիտ շուշակները դատուում էին փողից ինչպէս պինդ ձգուած պարաններ:

— Բարի աջողում, ասաց նա խաղաղ ու մէկին արտասանութեամբ և գաւազանը դետնին խփելով՝ կանգ առաւ, կարծես սպասելով թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէ:

Տանուտէրն իսկոյն վեր կացաւ աեղից.

— Օրհնեա տէր. համեցիր. ասաց նա յարգանքով և իւր տեղն առաջարկեց քահանային:

— Նստիր տեղդ, ես ըստեղ կընստեմ, ասաց վերջինս Ղազարեցեաց բարբառով և գաւազանը պատին յենելուց յետոյ, ձեռքը պարզեց Կամսարեանին. — բայով ես եկել, հազար բարով: Մօսին ասեց մի լաւ զօնադ եմ բերել տանուտէրի հմար. Թիֆլիզեցի ա: Ասեմ գնամ տեսնեմ ո՞վ ա, կըլի որ իմ բարեկամներէց ըլի. չուն ես էլ Թիֆլիզում լաւ ծանօթներ ունեմ:

Կամսարեանն իւր ով լինելը յայտնեց քահանային.

— Կամսարեան. էդ ինչ լաւ անուն ա. կըլի որ հին ազգից ըլէք. չուն հայոց պատմութիւնումը ըդենց մի անուն աչքովս ա ընկել:

— Երևի Կամսարական:

— Հա, էդ ա, Կամսարական: Դու ընդոնցից ես:

— Ոչ, ինքս էլ չգիտեմ թէ՛ ովքեր են իմ պապերը:

— Բա էդ ո՞նց կըլի:

— Իդա վերջ կըխարցնես, հլա նստե՛ խաց կե. նըկատեց տանուտէրը:

— Նստել պտեմ, բա ո՞նց պտեմ անիլ. հազարանց մէկ մեր գեղը ըսենց պատուական հիւր ա եկել, ո՞նց կը լի որ մօտը չը նստեմ զրից չանեմ: Ամա դէ ես հաց եմ կերել, դուք ինչ մտիկ չըտաք. անուշ արէք: Այս ասելով՝ քահանան իւր շալէ փարաջի փեշերն ամփոփելով՝ ծալապատիկ նստեց տախտի վրայ:

— Զարար չը կայ, մեզ խետ էլ կուտես, ասաց տանուտէրը և օղիի բաժակը լցնելով՝ առաջարկեց քահանային:

— Բա, արող էլ ես տալի. էդ հօ իշտահա (ախորժակ) մէկ էլ նորանց բաց կանի. էնչախը ո՞նց կանենք, ասաց քահանան ծիծաղելով:

— Իմա՛լ պիտ անենք, ինչ վոր Աստուած տուե, հմմէն յառեջդ դնենք կուտես. յարեց տանուտէրը:

— Հալբաթ որ ըդենց ա. «եղիջիր դու զօրաւոր ուտել զբարութիւնս երկրին», ասել ա մարգարէն. կուտենք, բա թի՛նչ կանենք, սրախօսեց քահանան: Ապա առնելով բաժակը օրհնեց հիւրին, տանուտէրին և բարեմաղթելով որ վերջինի սեղանը լինի միշտ բաց ու առատ, դատարկեց օղին մի ումպով:

Տանուտէրը նորէն լցրեց բաժակը և առաջարկեց Կաթսարեանին: Բայց սա հրաժարուեց խմելուց, առարկելով թէ՛ օղի չէ գործ ածում: Սակայն հրաժարուելու պատճառը ոչ թէ այդ՝ այլ օղիի կէս կարմիր և կէս դեղին գոյնն էր, որ Պետրոսի կարծիքով՝ առաջացած պիտի լինէր ջշի անմաքրութիւնից, կամ օղիի հնութիւնից: Նոյն իսկ եթէ օղին նոր ու մաքուր լինէր, դարձեալ նա չէր կարող բերանը տանել այն բաժակը, ո-

րով իրենից առաջ մի ուրիշն էր խմել, այսինքն քահանան Հենց այս պատճառով էլ նա մի փոքր լետոյ հրաժարուեց, նա և, գինուց, որովհետև սեղանի վրայ միայն մի գաւաթ էր դրած: Տանուտէրն, ի հարկէ, այդպիսի նրբութիւններ չը գիտէր: Բարի գալուստ մարտելով հիւրին և քահանայի օրհնութիւնն առնելով՝ նա տնկեց լցուած օղին և ապա խնդրեց հիւրին վայելել Աստուծոյ տուածը:

Քահանան առաջարկութեան չէր սպասում: Նա արդէն լոշերից մինը առաջ քաշելով՝ սկսել էր իւր յարձակումը նախ պանրի ու սոխի և ապա ձուերի վրայ: մինչդեռ Կամսարեանը դեռ նոր էր մտածում թէ՛ ի՞նչ ուտէ: Ժամ առաջ տեսած սեւակոլոյ պտուկները, (որոնց մէջ կերակուրներն էին պատրաստուել), չէին հեռանում նրա աչքից: Այդ պատճառով նա չուզեց ձեռք տալ հաւին կամ բորանուռն, ամենից վստահելն՝ դարձեալ ձուաներն էին, որոնց պատեանը ազատ է պահում ներսը անմաքրութիւնից: Երիտասարդը իւր ծովը բացաւ այդ ձուաներով: Բայց որովհետև կերած երկու ձուռն բաւական չէին իւր քաղցը յագեցնելու, ուստի պէտք եղաւ նոր ընտրութիւն անել: Այս անգամ վիճակն ընկաւ մածնի վրայ: Սակայն ինչո՞վ ուտել: Մածնի մօտ, ճիշտ է, դրուած էր մի փայտէ գդալ, որը շատ գործածութիւնից սևացել, աբանոսի գոյն էր առել: Այդ գդալը նա իւր բերանը չէր տանիլ և եթէ տանէր էլ, միւսներն ինչով ուտէին:

Դեռ այս վարանման մէջ էր նա, երբ քահանան բորանի մի մասը իւր ամանը փոխադրելուց լետոյ՝ նոյն գդալով առաւ, նաև, բաւականաչափ մածուն և սկսաւ ուտել լոշի կտորներով՝ նախապէս նրանց կորացնելով և գդալի ձև տալով: Ուտելու այդ եղանակը դիւր եկաւ Կամսարեանին և նա նոյն ձևով էլ սկսաւ վայելել մածունը: Երիտասարդի ախորժակն հետզհետէ բացուած

էր, կամ գուցէ նրա հետ կտտարուում էր այն՝ ինչ որ հայկական առածն է բնորոշում—կը կալղես՝ կուտեսս։ Այժմ նա ցանկանում էր օգտուել, նաև, հաւից, որի գերութիւնից դեղնած տեսքը ցոյց էր տալիս որ շատ համով պիտի լինի։ Այս պատճառով նա նախ՝ աշխատեց համոզել իրեն թէ՝ սեռակուլ պտուկը միայն դրսից կարող էր կեղտոտ լինել, բայց ոչ, նաև, ներսից, և լետոյ թէ՝ եղած կեղտն, անշուշտ, ջրի մէջը կը մնար և ոչ թէ հաւի ներսը կը թափանցէր։ Հենց այս մտածութեան վրայ՝ տանուտէրը պղնձէ ափսէն մօտեցրեց հիւրին, երևի վերջինի հաւի վրայ լառած հայեացքից գուշակելով նրա ցանկութիւնը։

— Հա՛, սրանից կարող եմ մի փոքր ուտել, բայց այստեղ... դանակ ու պատառաքաղ չը կայ, ասաց Պետրոսը ժպտալով ու սեղանի շուրջը նայելով։

Տանուտէրը ձեռքը տարաւ գրպանը և հանեց եղջիւրի սև կոթով, տեղական դարբնի շինած մի դանակ։ Բայց քահանան ժամանակ չը տուաւ նրան։ Հաւն շտապով իւր առաջը քաշելով՝ նա սոթտեց թւերը։

— Աղբէր, էս քաղաքացիք խճճ ուտելու թահրը գիտում չեն։ Բա ըսենց դեղին լալի (սաթի) պէս հաւին էրկաթ կը գիպնեն. ափսոս չի... հրէս Աստօծ դանակ էլ ա տուել մեզ, չանգալ էլ։ Այս ասելով՝ նա ձեռքերով պատառ-պատառ արաւ հաւը և ափսէն մօտեցրեց հիւրին։ Բայց վերջինի համար նորէն ուտելու դժուարութիւն առաջացաւ։ Քահանայի ձեռքերի արած ծուռալութիւնը փակել էր իսկոյն նրա ախորժակը. նա հաւի ափսէն հեռացրեց իրենից։

Տանուտէրն սկսաւ թախանձել։ Իսկ քահանան զարմացաւ որ երիտասարդը մի փոքր առաջ ցանկութիւն լալտնեց ուտելու, իսկ այժմ հրաժարուում է։ Նրանք չէին գուշակում հրաժարման պատճառը. և եթէ, մինչև իսկ, Պետրոսը քացատրէր այդ բանը, նրանք կը

գարմանային, որովհետեւ հաւր դանակով ու պատառաքողով կտրեւին աւելի անճաճ բան կը համարէին քան թէ ձեռքերով անդամատելը:

Վերջապէս Կամսարեանը չը կարողացաւ տանուտէրի խնդիրը մերժել, առաւ հաւի մի կտորը, հանեց նախապէս վրայի մորթը, որին կարող էր քահանայի ձեռքը դիպած լինել և խտրելով կերաւ:

— Ես որ քե նման հաց ուտէի, հմի վաղուց մեռած կըլէի, նկատեց քահանան ժպտալով:

— Ինչո՞ւ, հարցրեց Պետրոսը:

— Բա ըտե՞նց հաց կուտեն. էդ հու ծտի նման ես ուտում:

— Ուտում եմ այնքան, որքան կարողանում եմ:

— Կարողանալին ո՞ւր ես մտիկ տալի. զօռով պտի ուտես: Ամեն բան վարջիս (սովորութիւն) ա. թէ վարջիս կանես, էնա շատ կուտես. թէ չէ, հալբաթ, կերածդ ծտի փայ կըլի:

— Իսկ շատ ուտելն ի՞նչ օգուտ ունի:

— Ո՞րք թէ ինչ օգուտ. բա յստօ՞ժ մեղ ընչի հմար ա ստեղծել:

— Չը գիտեմ. մէթէ միայն ուտելու համար:

— Բա էլ ընչի՞...

Պետրոսը ծիծաղեց.

— Խե՛ ես ծծաղըմ. դէ ասա տենեմ էլ ուրիշ ընչի հմար ա ստեղծել:

— Կարծեմ ապրելու և գործելու համար:

— Հեր օրհնած, բա ապրիլու ես գործիլու հմար չը պտի ուտես. սոված փորով գործիլ կը լի՞:

— Պէտք է ուտել, այո՛, բայց չափաւոր: Ով որ շատ է ուտում, նա չի կարող շատ գործել:

— Եանդիշ ես (սխալուում ես). ով որ շատ ա ուտըմ, նա էլ շատ գործ ա շինըմ: Ա՛յ, քե ըինակ էշը, ձին, քըր, նրանք որ շատ չուտեն, կարօն բան անել: Ես

չէ, հրէս ես: Օրը իրեք անգամ որ լաւ, բաբաթ չուտեմ, կարամ էս զադա բան շինել: Էս օր ըռաւօտ եփեմ վեկացել հա. ծէգը հլա ծեգած ոչ՝ մտել եմ ժամն տաել. եդոյ գնացել եմ հանդը իրեք սել խորսն (խուրձ) հաքել բիրել տուն. եդոյ տիրակինի կտրած աթորը դարսել, հրէն սար եմ շինել. հմի էլ որ ըստեղ եկած չը լինի, մի ուրիշ բան կանի: Համա դէ ասենք, — ըսել լաւ դառաւ. չուն՝ եկանք, համ քե հետ ծանօթուեցինք համ էլ տանուտէրի սեղանը պատուեցինք:

— Իսկ դուք շատ ուտելուց չէք հիւանդանում, ժպտաշով հարցրեց կամսարեանը, որ, ըստ երևութին, ցանկանում էր քահանայի զրուցից իւր գործին պիտանի տեղեկութիւններ քաղել:

— Բա խի եմ հիւանդանում, քիչ որ ուտեմ, էն չախը կը հիւանդանամ...:

Այդ միջոցին Սալին եկաւ սեղանը. հաւաքելու, որովհետեւ ճաշը վերջացել էր:

Տէր հայրը, որ սկզբում մոռացել էր սեղանն օրհնելու, այս անգամ 'արդէն յիշեց իւր պարտքը և խօսքն ընդհատելով՝ լիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ)... աղօթքը կցեց և ապա Հայր մերն ասելով յետ քաշուեցաւ:

Երիտասարդը շնորհակալութիւն յայտնեց տանուտէրին իւր հիւրասիրութեան համար. իսկ վերջինս՝ համեստութեամբ յարեց.

— Աւել պակասը բաշխես, աղա, գեղիտուն ա, հըմմէն վախտ աղիզ (թանգագին) ղոնաղի արժան բան չը ճարուիր:

— Այդպէս մի ասէք, խնդրեմ, շատ շնորհակալ եմ, ընդհատեց Պետրոսը: Իսկ քահանան, որ չէր սիրում ճաշելուց յետոյ խօսիլ հեռանալ, որպէս զի ստամոքսին ժամանակ տալ իւր մարսողական գործողութիւնն սկսելու, կցեց ընդհատուած խօսակցութիւնը, որի նիւթն,

իւր կարծիքով, պէտք է հետաքրքրում լինէր համա-
րեանին,

— Ասում ես՝ շատ ուտելուց հիւընդանում չես...
էսա վաթսուռն տրեկան մարդ եմ. սառանի անգաջը
խուլ, հլա մի տեղս ցաւած չի: Ղորթ ա, ջանով չաղ
(գեր) չեմ. համա օսկորս ընենց դալիմ (ամուր) ա, որ
ձեռս երկաթ տաս միջից կը ծալեմ: Էս գիֆ նրանից ա
որ լաւ եմ ուտում: Հրէս, տանուտէրն էլ դիտում ա.
թէ որ ուզեմ, էրկու զազան (պղինձ) կերակուրը մի նա-
փսըմը (շնչումը) կուտեմ: Անգաջը կանչենք Սոլոմոն
սարկաւազին. մի օր Սևանայ վանքումը նստած ենք,
էլի ըսենց ուտելի վրայ խօսք վեր եկաւ, Սոլոմոնն ինձ
հարցրեց թէ՛՝ «այ էրէց, քանի՞ իշխան (իշխանաձուկ)
կարաս մինհետանց (միանգամից) ուտել: Ասի, սարկա-
ւազ, օխտը կուտեմ: Ասաւ՝ կարալ չես: Ասի մարջ
(կրաղ) գանք. ասաւ՝ գանք:

Մարջ եկանք էն պայմանով, թէ որ ես օխտը իշ-
խանն ուտեմ, հօ ուտեմ, ինձ հալալ. թէ չէ, մին ար-
ծաթի բռնօթաման (քթախոտի տուփ) առնեմ տամ
իրան: Իմ բաղդից՝ հդ օրն էլ Նլէնովկի ղօլիցը (կողմից)
խի բոլ (առատ) իշխան ին ղրկել վանքի հմար: Ամա
ի՛նչ իշխան. էն զաչաղ (մաքսանենգ) իշխաններից չը-
մանաս է, որ Թիֆլիզ աեսել ես, էն որ մինը ըսկի էր-
կու գրվանքալ գալիս չի. սրանց մինը՝ չորս, ես հինգ
գրվանքալ կըլէր: Հէնա սարկաւազը օխտը մենծ
մենծը ջոկեց, տուաւ աչքուն (խոհարարին), ասաւ.
— Ագա, էս գիֆ կը տանես մենծ զազանումը կը
խաշես. եզոյ սինումը կը դարսես կը բերես: Ասաւ՝
«աչբիս վրան»: Բլբիւեանց վանահայրն էլ, Աստօծ
կարգի, պատարագի պահի, խի՛ լաւ մարդ ա, ասեց,
«ագա, աղը տեղն արա՛, անալի չըլի, թէ չէ տէրտէրի
փորը կը ցաւի»: Ասեց՝ «ըդենց կանեմ, Հալը սուրբ»: Էնա
ըսկի մի սհաթ չը քաշեց, տեսնեմ ղոչաղ աչքին օխտը

իշխանն էփած, սինումը դարսած, տաք-տաք, շալքը (գոլորշին) բանցրանալէն բերաւ դրաւ առաջս, հետն էլ չորս լաւ փափուկ հացեր: Օրը ըսենց լաւ օր էր, մենք էլ հայաթումը (բակում) ուռի ծառերի տակին, կանաչկոտումը նստոտած: Միաբաններն էլ դիՖ հա-քուել են գլխիս որ տենան թէ՛ օխտը իշխանը ո՞նց պտի ուտեմ: Էն ա հենց որ աշիւն սինին դրաւ առաջս, իրեսիս խըջըհանեցի, ու Վստուած իմ, ի քեզ լուսա-ցայ, մի ամաչեցից, և մի ծիծաղեցին զինեւ թշնամիք իմա... ասեցի հու կցեցի ուտիլը: Մինը կերայ, էրկուսը կերայ, իրեքը կերայ, չորսնջինումը ուղեցի մի նափաս (շունջ) քաշեմ: Քուրդ Գրիգոր վարդապետը ասաւ՝ «այ տղայ, բանդ բուրդ ա ըւումա. ասի չէ, հայր սուրբ, եանդլիջ ես: Իգնատիոս վարդապետն էլ, որ հլա էն վախտը սաղ էր, ասաւ՝ «այ էրէց, ընենց արա՛ որ Ղա-զախեցուց իրեսը սև չը թողաս: Ասի արխային կաց, հայր սուրբ, էրկու էսքան էլ որ ընի, կուտեմ, միան թէ կարաք մի քիչ գինի հասցրէք ինձ: Ասաւ «էս սհա-թին: Էնա լուսահոգին կանչեց փոքրաւորին, ասեց. «ադա՛, գնա՛, իմ դուլաբումը (պահարան) պտի կուլի (դորակ) մէջ գինի կայ, բեր: Փոքրաւորը վազ տուաւ, բերաւ: Եդ աղբաթըխէր գինին գլխիս քաշեցի թէ չէ մին էլ տենամ ինչ որ կերել չի, քշեց տարաւ, ընենց որ ասես ըսկի բան չեմ կերել: Ասի, Սողոմոն սարկա-ւաք, էս չորսն էլ ուտիլուեմ, համա սրանէ բան չի լիւ-մի էրկուսն էլ խաշիլ տու բեր: Տենեմ սարկաւաքիս ունգըռուշը գնաց:

— Եդ հլա կեր, խաշիլը հեշտ ա, ասաւ: Էն ա ես նոր մէկելանց կցեցի ուտիլը: Քսան մնուտ չը քաշեց, քու արեւ. չորս իշխանն էլ մաքրազարդեցի. ինչ կըլի գլխների ղողերն (ուղեղն) էլ թամուզ ծծեցի, կուլի մնա-ցած գինին էլ վրան քամեցի ու եդ նստալ:

— Ապրես, տէր-Վանի, ապրես, կերածդ քե հալալ

ասեց վանահայրը: Մնացած վարդապետներն էլ գուլի-
ցին ինձ. ամա դէ Սուրմոնի սրտին որ դանակ խփիր
տրին չէր գուրս գալ. մին ընդերը հմար որ մարջը
տանուլ էր տվել. մին էլ ընդերը՝ որ ինքը վանքի տնտեսն
էր, նըհախ (ի գուր) տեղը օխտը իշխանն էր կորցրել,
էդ անց պղէր մուռանալ: Այլ էդ օրուանից դէսն ա որ
գիֆ իմ հուկնարը ճնանչում են:

Կամսարեանը որ քիչ առաջ լսում էր քահանային
հետաքրքրութեամբ, յուսալով թէ՛ նրա գրուցից կարող
է քաղել պիտանի տեղեկութիւններ, այժմ արդէն
ձանձրացաւ՝ տեսնելով որ նա այդքան երկար խօսում
է միայն շատ ուտելու վրայ, կամ գովում է իւր որ-
կամոյթները այնպիսի պարծանքով, ինչպէս մի ու-
րիշը կգովէր իւր քաջութիւնը, կամ մեծ գործերը: Այդ
հանգամանքը, նոյն իսկ, շարժեց երիտասարդի դժգո-
հութիւնը և այդ՝ այն պատճառով, որ նա նրա առաջ
բացաւ դարձեալ գիւղացու ցաւերից մինը և լիջեցրեց
նրան թէ՛ որքան անհրաժեշտ էր իրեն՝ հաւատարիմ
մնալ իւր ուխտին: Ուստի նա կտրուկ և մի քիչ էլ
կոշտ ձայնով հարցրեց.

— Տէր հայր, դուք ուտելուց զատ ուրիշ բանի
մասին չէք կարող խօսել:

Քահանան հասկացաւ տրուած հարցի ոչ յարգա-
կան նշանակութիւնը և լուրջ կերպարանք առնելով՝
պատասխանեց.

— Ընչի՞ չեմ կարող, որդի. բա հենց դրա հմար
չեմ եկել ըստի: Ելվախտ (քիչ առաջ) ախար իմ տիրա-
ցուն ասեց թէ՛ էն թիֆլիզեցի աղան եկել ա որ մեր
շէնըմը կենայ. թէ՛ Թարսաչայի ստարօստան ասել ա,
միթո՞մ, դու եկել ես որ ըստի ապրես հու մեր գեղա-
ցուց օգնես, բողղաւորացնես: Ասի՛ ամօռ, խէր
խաբարը քե, ա Մօսի, էդ ի՞նչ լաւ բան ես ասում.
մեր գեղն հենց դհենց (այդպիսի) մին մարդի ա կա-

րօտ... ամա չըլի թէ սխալուում էս, եա քե հետ զարա-
ֆաթ (կատակ) լեն արած. Ասաւ՝ դիտում չեմ. լսածս
եմ ասում: Հմի ես էլ եկալ որ մանամ թէ՛ եդ բանը
դնրթ ա թէ սուտ:

Պետրոսը, կարծես, լանկարծակիի եկաւ. նա ալդ
տեսակ հարցի չէր սպասում, ուստի և չիմացաւ ինչ
պատասխանել.

Մինչդեռ տանուտէրը, իբրեւ թէ հիւրի դիտաւո-
րութեանը լաւ տեղեակ, շտապեց պատասխանել.

— Հալըաթ որ զարաֆաթ են արե. քաղքցի աղա
մարդ իմալ կանալ գեղ նստիլ. էն կուգա համէն եաներ
շուռ գալ, գեղեր, քաղքներ տեսնալ, ընդիւր խմար էլ
կալներ է մեր գեղ:

— Հա, դրուստն եդ կըլի: Ախար ես էլ ասըմ եմ՝
նա ըստի ոնց կարալ մնալ, հաստատեց քահանան, ա-
պա դառնալով երիտասարդին՝ հարցրեց. — ասել ա (կը-
նշանակէ) դու հմի ճամբորթութիւն ես տնում:

Կամսարեանը գլխով հաստատութեան նշան ա-
րաւ:

— Ո՞նց ա, մեր գեղին հաւնըմ ես:

Երիտասարդը դարձեալ նշանով բացասեց, չըկամե-
նալով, կարծես, խօսել: Իսկ տանուտէրը լարեց.

— Աղան մեր գեղ ըսկի չըխաւնիր, համէն գեղե-
րէն փխն էս ա ասում:

— Հա. բա եդ խի չես հաւնում, հարցրեց քա-
հանան:

— Սրա ինչը հաւանեմ, սա հօ գեղ չէ, աւերանոց
է, խօսեց վերջապէս Կամսարեանը:

Այս դիտողութիւնը քահանայի ինքնասիրութիւնը
գրգռեց. ոնց թէ իմ հովուած գիւղին աւերանոց ա-
նունը տալ. մտածեց նա երեւի և տաքացած ասաց,

— Տես հըլա ինչ ա ասում... ա, սրանէ լաւ գեղ կը-
լի... Բա էն արարած աշխարհի տէր թագաւորը մեր

Չըբխլուին հաւանել ա, էդ դու ո՞նց չես հաւանում:
— Ո՞ր թագաւոր, հարցրեց Պետրոսը:

— Հանգուցեալ Նիկողայ Պաւլովիչը, բա մանում
չես:

— Ո՞նց է հաւանել, չեմ իմանում:

— Ընենց ա հաւանել որ եկել ա մի գշեր ըստեղ
կացել:

— Այդ ես չըբխեմ:

— Բա խի՞ չես գիտում. յուսում որ առնումէք, ըսենց բաները կարծում չէք:

— Այդ մէկը չեմ կարդացել:

— Դէ հէն ա, ասա, մենծ բաները թողնում էք, պուճուր բաներն էք կարծում լի. նկատեց քահանան, իբր թէ կամենալով ստացած վերաւորանքի փոխարէնը հատուցանել:

— Դա մեծ բան չէ, մի հասարակ տեղեկութիւն է. նկատեց երիտասարդը:

— Բա որ մենծ բան չի, խի՞ հրէն Սևանայ սուրբ Աստուածածնի եղցու գաւթումը գրած կպցրած ա թէ՛ «37 թուին, հոկտեմբերի 6-ին, չորեքշաբաթ օրը մեծադօր կայսր Նիկողայ Պաւլովիչը եկել ա մեր Չըբխլումը մին գիշեր կացել»:

— Կարող է պատահել:

— Ո՞նց թէ կարող ա պատահել. քե աօրմ եմ պտահել ա, բա հայելվար չեմ ասըմ:

— Հաւատում եմ, էլի:

— Բա որ հաւատում ես, խի՞ մեր գեղին հաւան չես կենում:

Կամսարեանն այս անգամ չկարողացաւ ծիծաղը դպել և վեր կենալով տեղից, ասաց.

— Դէ որ այդպէս լաւ գեղ ունէք, տարէք ինչ մի ցօյց տուէք:

— Լաւ, գնանք, ասաց տէր Վանին և վեր կացաւ տեղից: Տանուտէրը նույնպէս ընկերացաւ նրանց:

ԺԱ

Գիւղամիջից անցնելիս՝ նրանք հանդիպեցին լիսու-
նը անցած մի կարճահասակ, փոքրադէմ, խուզած մո-
րուքով, սուր հայեացքով և գոտեպինդ հագնուած
մարդու, որ, չընայելով տարիքին, ճանապարհն ընթա-
նում էր շատ ժրութեամբ: Մօտենալով քահանային,
նա հանեց մորթէ գդակը, «օրհնեա՛ տէր, ասաց և ա-
պա նորէն գլուհը ծածկելով՝ բարեկեց տանուտէրին և
նրա հիւրին:

— Աստուած օրհնեսցէ, ուստա Պետի, էդ ո՛ւր
ես գնում, հարցրեց քահանան:

— Ա դէր, ասըմ են Խօջան եկել ա, հրաման ա
բերել որ էն խեղճ Սալու տունը վեր գրի. գնըմ եմ
տեսնամ կա՛րամ՝ խնդրեմ, աղաչեմ. բալբի թէ (գուցէ),
մարդ ա, սիրտը ռահմ (գութ) ընկնի, մի քիչ էլ ա
մոհլաթ (միջոց) տալ:

— Ա Պետ, ես Խօջին տեսայ, գընըմ էր Սեմենով-
կայ, ասեց էգուց եմ եդ գալու, լայտնեց քահանան:

— Հա՛.

— Հա՛.

— Դէ էն ա, ասա, գնացել ա պրիստաւի եղնից
էլի, չուն պրիստաւը երէկ ընդեղ էր... էդ հու բանը
դժարացաւ, գուշակեց գիւղացին:

— Դէ խի՛ ա դժարանում. թէ մոհլաթ տալու
ըլի, էգուց էլ կըտայ, լաւադրեց քահանան:

— Զէ, ա դէր, պրիստաւը որ եկաւ, բանը խարաբ
կըլի. ռուս մարդ ա. լիւզուն գիտում չենք, խօսքը հս-
կանըմ չենք. պաշօլ դուռակ ա ասիլու հու խեղճի է-
լած չեւածը փեջատի (կնքէ). նրա հետ մենք ո՛նց խօսանք:

—Ա՛, հրէս խօսողն ըստի չի՞, ասլանի աօլ կտնգնած. ուռաի լիւզուն էլ գիդալ, փռանգինն էլ:

—Հա՛... դէ ո՛ւր ա. էդ հու Աստուօղորմութինը կըլի:

—Ի՞նչ բան է ալդ, հետաքրքրուեց երիտասարդը:

—Ըստեղ մի գեղացի ունենք, խօջա Միրզին փող ա տալացուք (պարտ). սա ուզում ա բարեխօսի, բալքի թէ խօջան մի քիչ էլ ա մոհլաթ տալ:

—Պարտականը, երեւի, իրա ազգականն է, հետաքրքրուեց Պետրոսը:

—Ձէ, հեռու մարդ ա. ամա դէ սրա հմար դիփ էլ ազգական են: Ով որ էս գեղըմը նեղութեան մէջ ըլի, սա պտի վազ տալ քէօմակ անի (օգնէ): Աստօժ օրհնի, լաւ ջան (հոգի) ա: Ամա մին փիս խասեաթ ունի. շատ ա ճշմարտախօս. (ասենք Ղազախեցիք դիփ ըգենց են. սա էլ Ղազախեցն ա քոչած): Հարիր անգամ ասել եմ՝ ա Պետ, խօսքն ընենց մարդու ճակատմէջին ես խփըմ որ նա շշկլում ա. ըգենց մտնիլ, որդի: Ասում ա չէ, ա դէր, գու գիւտում չես, լաւն հէնց էդ ա:

—Ի հարկէ, լաւը նա է որ մարդ ճշմարտախօս լինի և խօսքը ճակատին ասէ, հաստատեց Կամսարեանը:

—Բա՛, դու էլ ես ըգենց ասըմ. դէ էն ա, ասա, մին դինի (հաւատի) մարդիկ էք էլի: Դէ որ ըգենց ա եկ, ծանօթուիր էս ուստի հետ: Ա Պետ, գիտում ես սա հով ա. դարձաւ քահանան գիւղացուն:

—Ձէ, գիտում չեմ. պատասխանեց վերջինս:

—Սա Թիֆլիզից ա եկել. յուսումնական տղալ ա. մեր մհալները (գաւառները) ման ա գալիս, տենում ա, քննում ա. կըլի որ էդ տեհած քննածն էլ գիր ջինի, եա գաղէթ գցի: Ամա դէ մեր գեղին հաւան չի կենում: Վախում եմ մեզ վրալ փիս բաներ գրի: Հմի էս ա տանումեմ շէնը ման ածեմ, բալքի չըտեհածը

տենայ, հաճնի Դու էլ մեզ հետ եկ. զօջաղ մարդ
ես. կըլի մի մի հետ էլ դու սրա ջուղաբը տաս, ասաց
քահանան ծիծաղելով:

— Լաւ կըլի. գնանք, համաձայնուեց գիւղացին:

— Տէր հայր, ես գիր շինող կամ գաղէթ գցող
չեմ. ինչո՞ւ այս մարդուն սխալ տեղեկութիւն ես տա-
լիս, նկատեց Կամսարեանը ժպտալով:

— Դիւի մէկ ա, էս օր չըշինես, մէկէլ օրը կըշի-
նես. ես չէ մին տարուց եղբւր Յուսումնականներին ետ
լաւ եմ ճանաչում: Դալիս են ըստեղերք, ման են գա-
լի, բաներ են տենում, լսում, իմանում, եղոյ գնում:
Անց ա կենում մին, էրկու, իրեք, ես չէ հինգ տարի:
Մին էլ տենում ես էն բաները որ ըստեղ տեսել, իմա-
ցել են, դիւի մին մին դուս են տւել գաղէթում: Մարդ
ըրմանում ա թէ՛ ախպէր, բա էդ տնտէրանդին էս
հինգ տարուայ մէջումը ըսկի մի բան էլ ա մտահան
չարէն: Մի հետ ըստեղ մի թեմական էր եկել, հոգե-
ւոր Տէրի հրամանովն ուզում էր ըստանց հմար լու-
սումնարան բանայ. անումը Պռօշեանց էր, գիտում
չեմ ճանաչում ես թէ չէ:

— Ճանաչում եմ, ասաց Պետրոսը:

— Հա, ուզում էր բանայ: Դորթ ա էլլիկը (Ժողով-
ւորդը) փող չունէր, լուսումնարանի բանը գլուխ
չեկաւ, ամա դէ ինքը խճճ լաւ մարդ էր. հետը քաղցր
գրից ինք անըմ: Չունենրա մին գիրը Դիլի ձեռքս էր
ընկել, կարգացելի, գիտում ի որ լաւ գրող ա, մին օր
հարցրի թէ՛ պարոն թեմական, էդ հին հին բաները
որդից ես մացել որ գրել ես: Ասաւ՝ ըրեխութիւնից: Ա-
սի՛ բա էդ ո՞նց ա որ քսան, էրսուն տարումը մուռա-
ցել չես, դիւի ընենց սարքին գրել ես: Ասաւ՝ ընենց ա,
մուռանալ չեմ: Ասի՛ բա խճճ ես մուռանում եմ: Ասաւ՝
ընդուր որ Աստօճ քու գոգրէն ուրիշ թահր ա շինել,
իմն ուրիշ: Ասի՛ բա խճճ ըդենց շատ էք գրում. ախր

մինը գրըմ էք, բոլ ա (բաւական է), էրկուսը գրըմ էք բոլ ա. խի որ ճոնդը կցում էք, էլ բաց չէք թողնում: Ասաւ՝ ընենց ա, ճար չի լիւ. որ չըգրենք՝ ջաննեքո մղմող (ցեց) կընկնի:

— Բա է, ասել ա հիւընդութին ա լի, զարմացաւ Պետին:

— Հիւընդութին ա, բա: Ձեռ տենում, մինը որ մեր շէնից գնըմա արանը հունձի, ընտեղի դարասուից (ճահճաջուր) խմում, գալիս ա ըստի՝ ջերմը բողազիցն ա կենում: Տաքութենի թիւնդ վախտը տէլ ա տալի (զառանցում է). ասում ա՝ «հրէն սատանէն եկաւ, հրէն դժոխքը բացուել ա. եա չէ՝ հրեշտակնին կռիւ են տալի սատանոց հետ»: Ասըմ ես. ա բալամ, ըստի սատանայ չըկայ, ըստի դըժոխք չըկայ, էդ խի դճենց բաներ ես խօսում: Ասում ա՝ «բա քոն էք, տենում չէք էն պուզաւոր (եղջիւրաւոր) մենծ սատանէն, որ հաքին կռացրած, ալաւի (բոցողէն, ջիգան (նիզակ) ձեռքումը, կռքները (ատամները) շրճըցնելէն հրէս գալիս ա թէ մեզ կո՛ւլ տայ: Հմի ասելս էն ա թէ՝ էդ յուսումնականնին էլ, ուզեն չուզեն, պզի գրեն. չուն յուսումը որ առնըմեն դճենց մին հիւանդութին մտնըմ ա մէջները: Իրանք էլ չեն գիշում թէ՝ խի են գրում. ամա դէ որ չըգրեն, սիրտները կըճաքի, եա ոնց որ թեմականն էր ասում, ջանըները մղմող կընկնի:

Տէր Վանին, որ չէր կարողանում մոռանալ Կոմսարեանի՝ ռուտելու մասին արած վերջին դիտողութիւնը, այժմ արդէն աշխատում էր ոչ միայն զատ խնդիրների, գրողների կամ ուսումնականների մասին խօսել, այլ և ընդունելով՝ որ երիտասարդը դրանցից մինն է (թէպէտ և նա ալդ հերքեց), կծու ակնարկներ էր անում նրա հասցէին:

Պետրոսը, սակայն, զուարճանում էր տէր-հօր ալդ ուշադիր ջանքը տեսնելով:

Երբ նրանք մի քանի ծուռ անցքեր անցնելով հասան մի բարձր տեղ, քահանան կանգ առաւ և երեսը գէպի ծովակը դարձնելով՝ ասաց Կամսարեանին.

— Դէ հմի մտիկ տո՛ւ, տէս, սրանէ լաւ գեղ կըլ՞ն. ա՛յ, դէսը մտիկ տո՛ւ. դէնը մտիկ տո՛ւ. էս վերևի կապիտը տէս... այս ասելով նա ցոյց էր տալիս շրջակայ լեռներէ, ծովակի և կղզու տեսարաններն ու գեղեցիկ հորիզոնը, որին պարփակում էր երկնքի պայծառ կապուտակը:

— Դրանք ձեր գիւղի առաւելութիւնները չեն, այլ բնութեան. նկատեց Կամսարեանը. այդպիսի առաւելութիւններ ամեն տեղ կարելի է գտնել: Ի՞նչ ունէք դուք ձեր գիւղում՝ ձեր ձեռքով շինած, այն ցոյց տուէք:

— Ի՞նչ պտի ունենանք. ա՛յ էս տներն են, էս էլ վանները, էս մարաքները... Հօ տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ. բայց դրանք տներ չեն, այլ ախոռներ. մարդ արարածը չը պէտք է ապրի դրանց մէջ:

— Բա մենք խ՞բ ենք ապրում:

— Հէնց ես էլ դրա վրայ եմ զարմանում թէ՛ ինչպէս էք կարողանում ապրել:

— Դիտո՛ս ինչ կալ, աղա, մէջ մտաւ ուստայ Պետին. ես, զորթ ա, հմի գեղըմն եմ ապրում, ամա շատ մանեկած, շատ աշխարհ տեսած մարդ եմ: Ինչ որ ուստայ են ասում, նրա հմար ա որ վեշակով (արհեստով) գիւլգետը (հիւսն) եմ, քաղաքներում շատ եմ բանել. Բեան էլ եմ ըլել, Բագու էլ, Թիֆլիզ էլ: Վերջն ամեն տեղից զգուել՝ եկել եմ էս գեղը, մտել իմ շինած կօկալի (խրճիթ) տակը, թէ քնչ ա մի քիչ էլ ա դինջ ապրեմ էս հալալ ու սալալ (արդար և պարզ) մարդկանց հետ:

«Դու որ ըրմանում (զարմանում) ես թէ՛ մենք ո՞նց ենք կարում էս ախոռներումն ապրիլ, ես ըսկի ըրմանում չեմ քու ըրմանքի վրէն. չուն քաղքի սիրուն տնե-

ըսմը ծնուած, փափուկ ապրած, փափուկ մենծացած տղան ո՞նց կարայ գիտալ թէ՛ էս ախոռներումն էլ ապրել ա ըլում: Սմա դէ ես, որ տեհել եմ թէ՛ գիւղացիւն ո՞նց ա գործ շինըմ, ո՞նց ա ըռաւօտից ինչ կլի բիկունքար ու քոլին կպչում, հողի հետ կռիւ տալի, արեւի տակ քրտնում. ես կարամ ասիլ որ էն թահր նեղութիւնքաշողի հմար էս ախոռնին էլ շատ են: Չուն վաստակած ջանը, թիւացած օսկրները դինջացնելու հմար, տմարաթ (ապարանք) չի պէտք. բաւական ա որ մի ծածկած քիւնջ ըլի ու էդ քնջումը մարդ իրան փրտակի (ծածկի), էնքան ըլի միտն որ թողութացը չընեղի. ես չէ քամին քրտնած մէջքը չըսաւցնի: Ըստեղ ո՞նց որ տղամարդը, ընենց էլ կինարմատը սաղ օրը գործ ա շինըմ, չուն ցաւերնին՝ շատ ա, կարիքնին մեծ, պզի անեն որ ապրեն, ծերը ծերին հասցնեն. չանողը կըմնայ սոված, նրան ոչ Աստօծ ոչ էլ բանդան հաց կըտայ: Դրա հմար ա որ ըստեղի մարդը տան սիրըւնութենի, ես կարգու սարգի վրայ չի մտածում. չուն սոված փորի հմար ամենից առաջ հաց ա հարկաւոր, տկլոր ջանին էլ՝ միշկտոր կտաւ: Դէ մարդ որ էդ էրկու բանը զօռով ըլի ձեռք բերում, էլ ուրիշ բանի վըրայ ո՞նց կարայ մտածիլ:

«Այ, ուրիշ ա ձեր քաղքի բանը. ընտեղ փողը չէր ա (չոր միրգ. այսինքն՝ առատ). էնքանը բիրդան ո՞նց են հւաքում, գիտում չեմ, միան էս կայ որ՝ մինը թէ աշխատում ա, տասը մուֆթայ են ուտում, ոչ ջափայ կայ, ոչ նեղութիւն: Մեր տեղը որ կնիկը մարդու դադար (չափ) չըբըտնի, տանը կէսը կըմնայ սոված. ամա ընդի կնանիքը դիփ պարապ են ման դալի: Ձեր էն Սադարի (փոխարքայի) տան ռաջի քուչէն չը կայ, ընդեղով շատ եմ անցկացնել. էդ քուչան ըռաւօտից ինչ կլի բիկուն ման եկողներով լիքն ա ըլում. մարդ որ մտիկ ա տալի, մնում ա ըրմացած թէ՛ բա էս մարդիկը բան

ու գործ չունեն, էս խի ըսենց պարապ ման են գալի-
եա չէ էդ կնանիքը, էդ աղջկերքը, ես հարիւր ասեմ,
դու հազար ասա, դիւի հագուած, զարդարուած, քա-
րեղանին վրան, թուբուն թուբուն (խումբ-խումբ),
կունափուունկ (թեանցուկ) արած, ծիծաղելով, հռհռա-
լով, բաշաշաղալ, բաշ-իւխարի (գլխի վեր, գլխի վար)
գնում, գալիս են, բա դրանք տուն չունեն, տեղ չու-
նեն, քիւլփաթ (զաւակներ) չունեն. կար ու կարկատան
չունեն, հաց ու լուաց չունեն, էդ խի ամեն բան թո-
ղած ըստեղ բոլթա են քաշում (ճեմում են):

«Մի օր էս բաները հարցրի մեր Խաչթառակցի
վրժըպետին, նա գլուխը ժաժ տուաւ հու ասեց. — ունին
բա չունին. էդ կնանուց մեծ փայլ մարդ էլ ունին,
րեխերք էլ ունեն, տուն ու տեղ էլ ունեն, ամա դէ
դիւի վեր են ածում հու գալիս ըստեղ բոլթա քաշում:
Աստօժ, ասաւ, հաստատ պահի թագաւորութիւնը. բոլ
յուսումարանի ա շինել. րեխերքը ըռաւօտանց զրկում
են ընտեղ, մարդիկն էլ որ գնում են իրանց քեասիբու-
թենին, էնա կնանուց աստղը աչըլմիշ ա ըլում (բաց-
ւում է). շուտ են անում հագւում. զուգւում, զրթար-
ւում, անուշ հոտերը վրան շաղ տալի, տուն ու տեղը
թողնում նօքարի աբով (յուսով). թէ պատի րեխերք էլ
ունեն՝ նրանց էլ ծծմերի եա դարավաշի (աղախնի) վրէն
վեր գցում ու իրանք դուրս պրծնում, գալիս ըստեղ —
սէյր անում, մինն՝ իրա դօստի (բարեկամի), մէկ էլը
սիրեկանի հետ, շատերն էլ հենց մենակ, չանէն ցից
արած՝ չափում, չափչփում են քուչէքն ու մէլդանին:
Ընենցներն էլ կան, ասաւ, որ հւաքւում են իրանց մի թայ-
դաշի (ընկերուհու) տունը ու օր ու ցերեկով նստում, ինչկի
ճաշի վախտը թղթով ղումտը խաղում: Երբ տղամարդի
տուն գալու վաղէն հասնում ա, գալիս, հեղը հաց են
ուտում, ու նրա դուս գալուց եդը, էլ մէկէլ նորից տուն
տեղ թողնում, գնում են ղումտը քաղաւանէն... Աստօժ վկայ,

ասում էր վրժապետը. էս թահրի կնանուց հեօքմը (երտ-
ւունքը) որ ինչ տան է, դիփունանց մի թոկով կրկապեմ
հու բերեմ Սեանն ածեմ: Ասի, ա բալամ, էլ խՖ էդ
զիբիլները բերում ես Սեանն ածում, ու նրա անմա-
հական ջուրը մուռտառում, հազիր էս լղղած Գուռն
ածես պրծնես:

«Ըսենց էրկանցնելիս միտքն էն ա որ ասեմ թէ՛
քաղաքումը որ դհենց շատ փող կայ, հալբաթ, մուֆ-
տայ ապրողնի էլ շատ կլեն: Դէ քե ալան ա (յալտնի)
որ մուֆտայ ապրողի իշտահը համեշայ (միշտ) բաց կը-
լի. էս օր որ մին կերակուր ա ուտում, էգուց՝ էրկուսը,
իրէքը, ես չորսը կուզի. էս օր որ բուրդ ա հագնում,
էգուց արբուշում, զառ ու զարբար կուզի, էս օր որ մի
էտաժանոց տունում ա կենում, էգուց էրկու, ես ի-
րեք էտաժանոց կուզի. դհենցով՝ (ջանը դուս գայ աշ-
խատողին) ուտելն էլ կըբօլանայ. հագնիլն էլ կըճխա-
նայ, տունն էլ կըսարգուի, քաղաքն էլ կըզրթարուի:
Ամա դէ ըստեղ ոչ հեշտ աշխատիլ կայ, ոչ մուֆտայ
ուտիլ. դրա հմար էլ կարում չեն սարգ ու կարգի ե-
դից ընկնիլ: Այ, հրէս էս կտուրն անցնենք, եկ, մտիկ տու
տես, մեր կնանիքն ինչ են անում. տես ձերունք ըսկի
սրանց քաշած նեղութենի հարիւր փայլցմինը կարան քա-
շիլ...»

Այս ասելով, ուստա Պետին ուղեկիցներին առաջ-
նորդեց դէպի մօտիկ կալը, ուր այդ միջոցին մի մայր,
երկու հասակաւոր և մի փոքր աղջիկ, իրենց ութա-
մեայ մի տղայի հետ, զբաղուած էին ցարեն կալսելով:
Մայրը հոսելին (հեծանոց) ձեռքին պտտում էր կալի
շուրջը և շարունակ հասկերը հաւաքում կալամէջ, ուր
պտտում էին երեք զուգ կամներ: Դրանցից երկուսը
լծած զուգ եզներով, վարում էին երկու մեծ աղջիկնե-
րը, իսկ երրորդը, որին լծած էր մի մատակ, վարում
էր փոքրիկը, հեծնորդ եղբօր օգնութեամբ:

Արևը թէպէտ այրում էր վերևից, սակայն կալսողներն աշխատում էին ժրութեամբ: Երկփեղկ կամները, որոնց վրայ ամուր կանգնած էին աղջիկները, պտտում էին կալում զոյգը զոյգի ետևից և իրենց կալծաքարէ, սրածալը ատամներով անտեսանելի կերպով ցօղունը կտրտում, հասկերը տրորում և կալի յարգածածկ մակերևոյթի տակ ցորենը փռում: Փոքրիկ տղան շարունակ երգելով, կամ ճչալով խրախուսում էլ իւր ձին, որ առաջնորդում էր եղներին. մինչդեռ աղջիկները համեստ ու լռակաց, երբեմն միայն հարուածում էին ամուլներին, երբ սրանք ծանրացնում էին իրենց ընթացքը, կամ ցուռկներն իջեցնում դէպի փափուկ յարդը, մի քանի ցօղուն յափշտակելու յուսով:

— Տեսնո՞ւմ ես, մատնացոյց արաւ Պետին աշխատողների վրայ, սրանք Աւանանց ընխեքն են: Հերը՝ մեծ տղի հետ՝ հրէն հանդուժը ուրիշի հունձն ա անում, թէ ինչ ա, մի քանի շահի բերի տուն. ըստեղ էլ կնիկն ու աղջկերքը իրանց կալն են կալսում: Զորսն էլ կինարմատ են, էն պրտիկն ա տղայ. ամա դէ դիֆ էլ տղամարդի բարեբար գործ են ղինըմ: Հենց գիտում ես հեշտ բան ա էս կէժ արևի տակին սաղ օրը կաղնիլ, պտիտ պտիտ անիլը: Զեր խանրմներից մինը թէ որ հինգ մնուտ էդ կամներից մնի վրէն մնայ, գլուխը շուռ կը տայ, տափը կը պրանի (կը պառկի). հրէս դու էլ տղամարդ ես, ամա կարում չես տաքին դիմանալ, զօնդիկը փռնել ես որ արևով չընկնես: Ամա էն ջահել աղջկերքը տես, ըսկի այնումնի՞ն (հոգեբնին) ա. ուրախ, զվարթ իրանց գործին են: Էս ա էրկու սհաթից բանը քուլթահ կանեն (կը վերջացնեն), Աւանն էլ տղի հետ հանդից կը դառնայ, էրկսով, եա իրեքով եղանը (հեծանոց) ձեռք կառնեն, դարմանը քամուն կը տան. մուլթը հլա չընկած, ցորենը տուն կը բերեն, դարմանը մարաքը կածեն, իրանք էլ կը գան Ասծու տուած

մի կտոր հացը կուտեն ու կըքնեն։ Հմի ասա տենեմ. ըռաւօտից ինչ կլի ըիկուն բանած, վստակած էդ խալ-խի հմար շատ հարկաւոր ա որ ամարաթ չունեն, ես չէ փափուկ կողինք, որ մէջումը քնեն։ Այ, հենց էս կտրանը, ես չէ տանը, տափի վրէն մի խսիր են գցում հուպրանում. դժարն էն ա որ աչկը հուփ կալան (փա-կեցին), ընենց դինջ քնում են որ ասես դրախտումն են։ Ամա ձեր տեղը, էն ամարաթների միջումը շատե-րը կարո՞ւմ չեն թէ գշերը քնեն, փափուկ կողէնքումը տապակ տապակ են գալի։ Եդ նրա հմար ա որ դործ չեն շինում, ջանըներին ջափայ (նեղութիւն) չեն տալի, թէ ինչ ա. մի քիչ էլ ա յոգնեն, անուշ քնի համ տենան։ Հմի դու կասես թէ՛ ըստո՞նք էլ էդ ա մինջա (մի հատ) կալ ունեն, ըսօր կըպրծնեն, էգուց էլի պա-րապ են։ Ամա դէ դհենց չի։ Այ, ըստեղ համեցէք, ու-րիշ բան շանց տամ։

Այս ասելով՝ Պետին առաջնորդեց ուղեկիցներին դէպի մի ուրիշ կտուր և այդտեղից ցոյց տուաւ դիմա-ցի տան սրահը, ուր մի քանի կանայք նստած բուրդ էին գլցում։

— Տենո՞ւմ ես, ըստոնց կալաբանը վերջացել ա. ցո-րէնը խորել են, դարմանը հւաքել. տան իրեք տղա-մարդից մինն էնա մալի (ապրանքի) հետ. մինը ձիանն առած՝ քրահտարութիւն ա անում, մինն էլ մէջումը տախտակ ա քաշում։ Կնանիքն էլ, տենո՞ւմ ես, պարապ չեն ըսկի. սանդերքը ըռաջներին հայահայ (շտապ-շտապ) բուրդ են գլցում։ Հրէն էն պառաւն էլ տենո՞ւմ ես, ճխարակի տակին։ Լուսը չը ծէգած՝ նա ընտեղ նստած ճլվզտացնում ա. հարսների գլած բըթից թահը թահը (տեսակ-տեսակ) թէլ ալ մանում. բարակը՝ շալի հմար միջնակը՝ գուլբի, մի քիչ հաստը՝ կարպետի, չուալի, ես խուրջինի, քօլբի (տականք) թելիցն էլ չուան են գործում, ես շարիդ (թոկ) հլօրում։ Ասենք էդ բաները

Հմի չեն անում: Էս ա ձմեռը որ գայ, ձիւնը դուռը կոխի, մեր կնանոց ներսի գործը ըսենց բաներ ա ըլելու: Այ, տեսնում ես էս չուխէն (կապա) ու շտլվարը, սրանց թէլը մերս ա մանել, շալը՝ կնիկս ա գործել. էնքան պինգ ա որ հինգ տարի կըդիմանայ. էս տոլաղներս (սրնապան) քւորս բանն ա. գուլբաներս՝ իմ պզտի աղջկան: Ուզում եմ ասել որ մեր կնանիքը պարապ օր չունին. վարուցանից, հունձ ու կալից, չիր ու բլիթից եղը՝ գալիս են ըսենց բաները: Հաց ու լուացը, կար ու կարկատանն էլ համեշայ (միշտ) կայ ու կայ:

— Ա. պետի, բա խէ՛ քու բիբու (մօրաքրոջ) վէստանը (ոստայն) շանց չէս տալի. հրէն էլվանումը երհանած, մատնացոյց արաւ քահանան:

— Դէ էն ա տեսնում ա ըլի, նկատեց Պետին:

— Տեսնում ա, հա՛, ամա դէ մին ասա թէ՛ էն քնչ ա է՛:

— Ի՞նչն է ինչ. հարցրեց Պետրոսը:

— Այ, էն զօւբա սարը, շարունակեց քահանան, ցոյց տալով տներից մէկի սրահում կանգնեցրած գորգի ոստայնը. — նրա էրգենքը հինգ գազ ա, լէնքը՝ իրեք: Էն ա որ գետրծեն պրծնեն՝ կարպետի էրգէնքը տասը գազ ա դառնալու: Էն սրա բիբու տունն ա. չորս տղայ ունի, չորս էլ հարս: Էնու գետրայ (ըստ այնմ) էլ՝ Աստօժ պահած՝ բոլ թողներ, տղայ ու աղջիկ. նրանց կէսը հունձ ու կալով ա ըլած (զբաղուած), կէսն էլ հրէն շար են ընկել վէստանի ըռաջին՝ կարպետը գետրծում են: Մին էրկու ամսից եղը սկստրաստ ա ըլելու, հարիւր մանէթն էլ ականջիցը կախ:

Կամսարեանը հետաքրքրուեց գորգի գործով և հարցրեց թէ՛ արդեօք չի կարելի մօտ գնալ ու նայել:

— Բա խէ՛ չի կարելի, գնանք, ասաց ուստա Պետին և առաջ անցաւ:

Տան սրահին մօտենալուց՝ ոստայնի առաջ նստող

Հարսներն ու աղջիկները ոտի կանգնեցին. նրանցից առաջինները երեսներն սքողեցին, մինչդեռ վերջինները հետաքրքիր աչքերով նայում էին եկողներին: Գորգի գործին նայելուց առաջ՝ Կամսարեանի ուշադրութիւնը գրաւեցին կանանց տարօրինակ հագուստները, որոնք, իրենց տեսակում, ներկայացնում էին տգեղութեան մի ուրոյն տիպար: Նրանք, իսկապէս, որոշ ձև չունէին, այլ կազմում էին զանազան տարազների աններդաշնակ մի խառնուրդ: Կանանց գլուխներն, օրինակ, կապուած էին վիրակների նմանութեամբ, մինչդեռ բերանները ծածկուած քնթկալով՝ արցախեցույ պէս: Հագուստին էր՝ կարճ դերիա, որի տակից, մօտ երկու թիղ երկարութեամբ երևում էր՝ Նուրեցի կանանց յատուկ՝ կարմիր ու լայն վարտիքը: Դերիայի վրայից կապած ունէին սովորական գոգնոց, իսկ նրա վրայից էլ՝ հագած զազանի թաթար կանանց գործածական մի բաժկոնակ: Այդպիսով այդ հագուստը, որ մեծ մասամբ հին էր և պատառատուն, ստանում էր մի տգեղ ձև, որ աւելի ևս՝ տգեղացնում էր կանանց կազմուածքը, որն առանց այն էլ հեռի էր գրաւչութիւնից: Նրանց մէջքերին հաստ էր ու տափակ, փորներին՝ դէպի կուրծքը բարձրացած, դէմքերին տգեղ, բերաննին մեծ, իսկ մորթը արևահար: Կանանց ձևով հագած էին և աղջիկները, միայն այն զանազանութեամբ որ սրանց երեսները բաց էին և միայն գլուխները ծածկուած հասարակ չթէ աղլուխով:

Մինչդեռ Կամսարեանը զննում էր կանանց տգեղ արտաքինը, ուստա Պետին մօտեցաւ ուստային, բացատրութիւններ տուաւ նրա կազմութեան, թելերը հինելու, գորգը գործելու և նրան կտրելու, կամ ուստայինի վրայից հանելու մասին: Ապա դառնալով հարսներին պսաց.

— Բա խի՞ էք կանգնել, նստեցէք բան արէք. էս

դոնադը ճանաչող մարդ ա. ուզում ա տենալ ո՞նց էք կարպետ գետրծում:

Կանայք իսկոյն իրենց տեղերը բռնեցին և գոյն-գգոյն թելերը նորէն ձեռք առնելով, սկսան արագ արագ գործել՝ իւրաքանչիւրն իւր բաժին շինուածքի վրայ:

Այս անգամ արդէն Պետրոսը դիտում էր գեղջկուհիների գործը ճշմարիտ հետաքրքրութեամբ և զարմանում թէ՝ քնչպէս նրանք, առանց առաջնին որ և է նկար ունենալու, թելերի այդ պարզ հինուածքի վրայ հետզհետէ հանում էին կանոնաւոր գծերով գեղեցիկ նկարներ, կամ թէ ինչպէս մի քանի զուգ ձեռքերի զատ զատ գործուածքը վերջն ստեղծում էր մի ամբողջ նկար:

—Այ, սա լաւ բան էր, սրան հաւանեցի, ասաց Կամսարեանը, երբ նրանք հեռացել էին գորգ գործողներէց:

—Ա՛, մեր ո՛ր բան չի լաւ է՛. դու հլա քնչ ես տեսել, պարծեցաւ Տէր հայրը:

Այս խօսքի վրայ նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով, ուր ընտանիքի մայրը և իւր երեխաները զբաղուած էին մի տարօրինակ աշխատութեամբ:

Բակի մի անկիւնում տղաներից երկուսը, մերկ յոտքերով ու սրունքներով կոխկրտում էին մի ինչ որ սև զանգուած, որի վրայ երրորդը՝ հետզհետէ ցրում էր դարմանի աւելցուկ: Մի փոքր հեռու՝ մայրը նոյն զանգուածից մի մասն առանձին առած՝ մեծ ջանքով հունցում էր. իսկ միջահասակ մի աղջիկ, կռները սոթտած՝ այդ հունցուող մասից շինում էր բլթներ և ուժով զարկում տան արեգընդդէմ պատին: Այնպէս որ Վրաշաղախով ծեփուած այդ պատը հետզհետէ սևուկ բլթներով ծածկուելով՝ ստանում էր մի շատ աղտեղի պատկեր:

—Այդ քնն են անում, հարցրեց Կամսարեանը:

—Ցան են շինելում, պատասխանեց տանուտէրը:

—Ցանն:

—Հա:

—Ի՞նչ բան է ցանը:

—Ցան չես գինալի, էն որ էս օր մեր օջախ կը վառէր:

—Ցանը սրանք տխարին են ասում. հրէն, էն որ ընդի ամբիւղ տուած (դիզուած) ա. բացատրեց տէր հայրը, ցոյց տալով Կամսարեանին դիմացի բակում գըտնուող քակորի կոյտը.

—Ինչքց են պատրաստում, հետաքրքրուեց Պետրոսը:

—Չես տեսնում ընչից ա, հարցրեց քահանան:

—Տեսնում եմ միայն սև-կանաչ գօյնի մի ցեխ. կարծեմ մէջը խառնուած է տաւարի...

—Ոչ թէ խառնուած ա, հենց ինքը տեղն ու տեղը տաւարի թրիք ա, ընդհատեց քահանան, և ապա կամենալով մի գիտական ծառայութիւն անել երիտասարդին, սկսաւ բացատրել թէ՛ քնչպէս են պատրաստում աթարը:—Էս որ կայ, ամենից լաւ տեսալին ա, չուն տաւարի անխառն թրիք ա: Սրան էս ա սըհենց թաղա թաղա (թարմ) հաքում են, հետը պարման խառնում ու պատի վրէն բլիթում: Էս որ չուրանայ, ընենց ա էրիլու ոնց որ խաղալը (բարակ տաշեղ): Ամա էն մէկէլը, որ ընդի դարսած ա, ըսենց չեն շինում: Եփօր ձմեռը տաւարը տանն ա ըլում, կիւմըմը (գոմումը) բոլ թրքում ա: Էն թրիքը հաքում են դիւս բիրում հայաթն ածում. նրա հետ էլ շատ վսիտ խառնում են ձիան. թրիքը, եա ոչխարի կտիտը. ամա դէ լաւն էն ա որ ըսկի չը խառնեն, չուն նրանք լաւ չեն էրում: Եդոյ էդ հայեաթի մէջ ածած թրիքը մին ղովից կօխ են տալի —մադդ թէ անասուն, մին ղովից էլ վրէն:

աւելցնում: Գարունքին, եփ որ տաւարը դիւս ա գետլի չոլը, հայեաթի թրիքը շատ կոխտալուց չուրացած. ու տափակած ա ըլում: Էն ա սկսում են բահով կտրտիլ ու մէկ էլ երեսով արիւումը շարիլ: Եփոր լաւ չուրանում ա, սկսում են դարսիլ, դէզ շինիլ: Վերջը էդ դէզի չորս զօլը ցլով ճեփում են որ անձրեկից չը թըրջուի, եա արեկից ցրիւ չը գալ: Ում աթար էլ որ գարունքին չուրացած չի ըլում, նա էլ պահում են ամառը կտրում: Ըսենցով ամեն մարդ իրա վառելիքի պատրաստութիւնը տեսնում ա որ ձմեռը նեղութիւն չի քաշի:

— Եւ բոլոր տարին, ուրեմն, դուք այդ գարշահոտ քակորն էք այրում, հարցրեց Կամարեանը, զգուանքից երեսը թթուացնելով:

— Ել խէ ա գարշահոտ. դու որ սըվոր չես, քեզ հենց ա թւում. ամա մեզ հմար, ամօթ չըլի ասիլը, հըլա մի քիչ էլ անուշահոտ ա, ասաց քահանան ու ծիծաղեց:

Կամարեանի դէմքին խաղաց մի 'ժպիտ, որ արտայայտում էր խոր արհամարհանք: Տէր հայրը, սակայն չըմբռնեց այդ ժպիտի նշանակութիւնը. մինչդեռ ուստալ Պետին չը կարողացաւ լռել:

— Աղա, մեզ վրայ, տեսնում եմ, ծծաղում ես. որ դհենց ա, մի ասա տեսնեմ ո՞նց անենք. մեր հացն ընչո՞վ թխենք. կերակուրն ընչո՞վ էփենք եա տունը ընչո՞վ տաքացնենք:

— Ինչո՞վ է եփում, կամ տաքացնում մալականը:

— Փէտով:

— Դուք էլ փալտ վառեցէք:

— Բա որ փէտ չունենք:

— Ինչո՞ւ նա ունի:

— Մէշան նրանից մօտա, մեղանից հեռու. համ էլ նրանք հարուստ են, մենք աղքատ: Էն փողը որ

պտի տանք փէտի, առլիս ենք մի ուրիշ պակասութէնի. եա մի ձի ենք առնում որ մեզ հմար բան անի. եա կով ենք ձեռք բերում որ նրա կաթով ըխտանց պահենք. եա չէ շորի, փալասի ենք տալի որ մեր տանեցոց տկլորութիւնը ծածկենք. պակասութիւն շատ. ես ես որ մէկն ասեմ: Եհ, տաւարի թրիքն էլ, որ ուրիշ գեղերում տան ըռաջին կիտում են, շէնը հուտացնում, մենք փետ ենք շինում, էրում. ըսենց ղէյրաթ (խնայողութիւն) ընելին, եա նամուս պահելին դու խէ չես հաւնում:

--Դա ոչ ղէյրաթ անիլ է, ոչ նամուս պահիլ. այլ ուղղակի ծուլութիւն: Օգտւում էք այն բանից, ինչ որ ունիք, ինչ որ պատրաստ կայ. թէկուզ այդ պատրաստը լինի՝ կեղտ կամ ապականութիւն:

—Ուրեմն քու ասիլով մենք ծիւլ մարդիկ ենք լի:

—Հա, ծոյլ էք. ծոյլ որ չը լինէիք հիմի այս սարերը ծառերով ծածկել էիք, անտառը բերել, ձեզ մօտեցրել: Ժամանակով, երևի, բոլոր այս լանջերը ծածկուած են եղել ծառերով. ձեր պապերը նրանց անխնայ կոտորել են, դուք էլ, ահա, եկել, մի շիւ չէք տնկում. ճալներդ վտրած, ի հարկէ, քակոր պիտի այրէք, ուրիշ քնչ անէք:

—Եդ քու ասիլով քակորը որ փիս բան ա, մէջ մտաւ քահանան, բա խէ Աստուածաշնչումը, մարգարէն ասում ա՝ «հա, ետու քեզ քակոր արջառոյ... և նովաւ արացես զհաց քո»: Ուրեմն Աստուած էլ ա հրամայում որ հացը քակորով թխենք:

—Եհ, Տէր-հայր. դու էլ մի քանի բան ես բերան արել, տեղի անտեղի խարջում ես... խօսք եմ ասում, խօսքս լսի՛ր, նկատեց Կամսարեանը տաքանալով:

Ո՞նց թէ մի քանի բան... ուզում ես սաղ Դաւթի Սաղմոսը, եա Առական գիրքը, եա Ժողովողին գլխից ինչ

կլի տակը անգիր ասեմ, մգեար դու Տէր-Վանուն ընչք տեղ ես դրել:

Կամսարեանն այս անգամ, նոյն իսկ, ուշադրութիւն չը դարձրեց քահանայի խօսքերին և դառնալով Պետուն ասաց.

—Այո՛, բարեկամ. այս ժողովուրդը ծով ժողովուրդ է. նա որ ծով չը լինի, կաշխատի, մարդավարի կապրի. սա կեանք չէ, որ նա վարում է. սա գիւղ չէ, ուր նա ապրում է. նալիր է. մի կոտրուած ձեռք չի գրտնուել որ այս ամբողջ շէնի մէջ, մի հատ ծառ տնկէ... սա խայտառակութիւն չէ:

Այս ասելով՝ նա դարձաւ տանուտէրին և ցանկութիւն յայտնեց, տուն վերադառնալու, որովհետեւ մանգալուց արդէն յոգնելէր: Քահանան ու Պետին բաժանուեցան նրանցից, իսկ տանուտէրն իւր հիւրին առաջնորդեց գէպի տուն:

ԺԲ.

Արեւը մայր մտնելու մօտ՝ ծովակի կողմից՝ սկսել էր փչել զով քամի, որին գիւղացիք սպասում էին ժամ է ժամ: Խնչ էր նրա անելիք ծառայութիւնը:

—Ցորէնի խուրձերը կախել, հասկերը տրորել էին, այդ քամին պիտի գար, որ դարմանը զատէր: Եւ ահա կալերի վրայ, որոնց մեծ մասը գտնուում էին կտուրներին, սկսուել էր մեծ շարժում: Ամեն տեղ ձեռքերը գործում էին ժրութեամբ. եղանները բարձրանում ու իջնում և իրենց հետ՝ օդի մէջ՝ մրրկում յարդի փոշեխառն վիժակներ: Դրանցից քամին դարմանը խելով տանում, փռում էր կալի եզերքին, իսկ ցորէնը նորէն գետին իջնելով՝ կազմում էր մաքուր հատիկների կոյտեր:

Կալերում սկսուած այդ աշխատանքը գիւղի օդը տոգորել էր դարմանի մղմեղ փոշիով: Երիտասարդ Կամ-

սարեանը մի քանի տեղերից անցաւ, գրեթէ, փախչելով, որպէս զի օգուտ փոթորկուող այդ փոշիից ազատէ թէ իւր թոքերը և թէ հագուստը: Երբ նա տուն հասաւ, մի առանձին հաճութեամբ նայեց սրահում դրողած ինքնայեռին, որ հակառակ սպասածին, բաւական մաքուր էր և որի մէջ ջուրը եռում էր արդէն: Տան տիկինը սպասում էր ամուսնուն որ սա գալ թէյը պատրաստելու, ըստ որում գիւղերում այդ ոչ սովորական գործողութիւնը կինը իւր ուժից և իրաւունքից վեր բան էր համարում:

Թէյ խմելու մեծ ցանկութիւնը լիշեցրեց Կամասրեանին ճաշի պատրաստութեան բոլոր պատմութիւնը և զգուշացրեց նրան իրեն օգնելու:

— Նս լաւ թէյ ունիմ, թողէք որ նրանից ձգեմ, ասաց երիտասարդը և առնելով թէյնոցը, որ հենց նոր տանուտէրը ստացել էր կնոջից, իւր ձեռքով լուացաւ, մաքրեց հին կեղտերից և ապա տուն մտնելով, հանեց պալուսակից իւր թանգանոց թէյը, մի քանի պտղունց դրաւ թէյնոցի մէջ, եւման ջրով մի անգամ ողողեց և ապա նորէն վրան ջուր լեցնելով՝ դրաւ ինքնայեռի վրայ:

— Եդ իմա՛լ օղողիր, չայի խամ կորսըվաւ, նկատեց տանուտէնը:

— Ձէ, չի կորչիլ: չայի վրայ միանգամ պէտքէ ջուր լցնել, թափել, որ փոշիից մաքրուի, և ապա նորից լցնել, բացադրեց Կամասրեանը:

— Մէ խեռ պրիստաւ եկաւ մեր գեղ, մեղի զօնաղ եղաւ: Ինձը չալ ուղեցի քեզի պէս վլամ, (լուամ), էն չըթորգեց, ասաւ խարաբ կեղնի:

— Պրիստաւը չի հասկացել, կարճ կապեց Կամասրեանը:

Թէյը պատրաստելուց՝ երիտասարդն իւր ձեռքով լուացաւ նոյնպէս բաժակներն ու պնակները, սեփհա-

կան սրբիչով սրբեց: Ապա թէյն ածելով՝ բաժակներէց մինը դրաւ տանուտէրի և միւսն իւր առաջ: Յետոյ հանեց նոյնպէս մաքուր քսակից շաքար և դրաւ մէջ տեղ:

Տանուտէրը իւր բաժակն առնելով մի ումպ ճաշակեց ու բացադառնեց:

— Օխայ, էս ինչ անուշ ա. իմա՛յ մեր չայ իսենց խոտ չի տալում: Երևում ա մենք շինել չենք գինա:

— Ձէ, ոչ թէ շինել չը գիտէք, ալ թէ ձեր չայը լաւ տեսակից չի լինում. լաւ տեսակը թանգ է:

— Խա՛, իդենց ա. համաձայնուեց տանուտէրը:

Բայց, ինչպէս երևաց, վերջինս չար աչք էր ունեցել. երիտասարդը դեռ բաժակը բերանը չէր տարել որ նոր բարձրացած մի քամի՝ հարկան կալի կողմից՝ բերաւ մանրամաղ դարմանի փոշին ու տանուտէրի սրտհը լցրեց: Պետրոսն իսկոյն փակեց աչքերը՝ փոշիից նըրանց ազատելու համար: Ապա երբ քամին անցաւ, առաջին բանը, որ նա տեսաւ, իւր թէյի բաժակն էր, որ ամբողջովին ծածկուել էր դարմանով ու փոշով:

— Փու, ինչ խալտառակութիւն, շնջաց նա ինքն իրեն և բաժակն առնելով՝ թէյը թափեց գետին:

— Եդ իմա՛յ դէն ածիր, դարման ա, բան չը կայ. ա՛յ ձեռքով դուա խանեմ, համէնը կը թամբդի, ասաց տանուտէրը և մատները խրելով բաժակի մէջ, սկսաւ դարմանի փշուրները հանել և ապա խմել:

Կամսարեանը թթուած դէմքով նորէն լուացաւ բաժակը, նորէն լցրեց և ալս անգամ արդէն զգուշութեան համար պնակը դրաւ բաժակի բերանին, որպէս զի մինչև սառչիլը՝ փոշի-բաւն չընկնեն մէջը:

— Դժուար է, շատ դժուար է ալստեղ ապրել, նկատեց Կամսարեանը՝ գլուխը շարժելով:

— Խա, քե նման, աղա մարդու խմար դժար ա.

ամա մեզ խմար խեղտ ա, յարեց տանուտէրը և խօսակցութիւնն այս անգամ սրանով վերջացաւ:

Մուլթը կոխելուց՝ տանուտէրը կամենում էր ընթրիքի պատրաստութիւն տեսնել, բայց Պետրոսն ասաց որ չի պիտի ընթրէ. միայն խնդրեց որ իրեն քնելու տեղ ցոյց տան, որովհետեւ շատ յոգնած է և կամենում է հանգստանալ:

Տանուտէրն առաջարկեց քնել ներսի տանը, ասելով որ դրսում կարող է մրսել, որովհետեւ գիշերը ծովի կողմից երբեմն փչում է ցուրտ քամի:

Պետրոսն համաձայնուեց և ներս գնաց որ տեսնէ թէ՛ որքան է այդ տունը յարմար, գոնէ, մի գիշեր քնելու համար: Բայց ինչպէս ցերեկով, նոյնպէս և այժմ, այդտեղ բարում էր, խոնաւութեան ու ճուխի անախորժ հոտը:

—Այստեղ չեմ քնիլ, ասաց նա ու դուրս եկաւ:

—Էս մէ օթախն էլ տես, թէ խաւնիս իստեղ քնա. ասաց տանուտէրը և բաց արաւ սրահի վրայ գտնուող մի ուրիշ դուռ:

Պետրոսը ներս մտաւ. Դ. սենեակի նման բան էր, միջին ցածր ցանկով կտրուած: Առաջին մասը փոքր է շատէ մաքուր էր և պատի տակն ունէր տախտակաշէն մի թախտ: Միայն թէ այդտեղից փչում էր թրիքի չափազանց սուր հոտ:

—Այս հոտը որ տեղից է, հարցրեց Պետրոսը քիթը վեր քաշելով:

—Էն մէկ էլ եանը տաւարի գոմն ա. խոտը նրանից ա. ամա տաւար ըստի չի էն դրսի դռն ա. մինակ ձին ա կապած:

—Դուք ուրեմն այստեղ նստում կամ քնում էք:

—Խրամանք ես. ձմեռը շատ փայ էսօր մէջ ենք նստելում, եա քնելում. ընդուր որ տաւար մէջ ա ըլում էդ պատճառի էլ տաք ա հըլում:

Պետրոսը գլուխը շարժեց և դուրս գնաց:

— Այստեղ լաւ է, այստեղ կը քնեմ, ասաց նա, ցոյց տալով սրահում դրած թախտը:

— Կամք խրամանքիդ ա, պատասխանեց տանուտէրը և համայեց Սալբին անկողին պատրաստել:

Մինչդեռ երիտասարդին պաշարել էր այն միտքը թէ՛ ինչ անկողին պիտի բերեն իրեն և թէ՛ արդեօ՞ք ինքը կարող պիտի լինի քնել նրա մէջ, տանտիկինը դուրս հանեց գունաւոր կտաւի մի կապոց, որի մէջ խնամքով պահուած էր մի ձեռք մաքուր անկողին: Նա բացաւ կապոցը, անկողինը պատրաստեց և հեռացաւ:

Պետրոսը անկողնի մաքրութիւնը տեսնելով՝ հանգստացաւ: Բայց անյայտ անմաքրութիւնից ազատ լինելու համար էլ՝ նա կարեւոր համարեց հանել պալուսակից երկու մաքուր սաւան, որոնցից մինը փռեց ներքնակի վրայ, իսկ միւսը՝ վերմակի տակ: Երբ տանուտէրը «բարի գիշեր» մաղթելով հեռացաւ, Պետրոսն իսկոյն հանուեց ու պառկեց: Յոգնածութիւնն ու զով գիշերը անուշ քուն բերին երիտասարդի աչքերին:

Հետեւեալ առաւօտ նա աչքերը բացաւ արշալուսից առաջ: Եւ որովհետեւ այդ ժամին տանուտէրի ամբողջ տունը ոտքի վրայ էր, ուստի ինքն ևս շտապով հագնուեցաւ: Կամենալով լուացուել աղբիւրի ցուրտ ջրով, նա իւր հետ առաւ լուացման պարագայները և հարցնելով աղբիւրի տեղն ու ճանապարհը, ուղղուեցաւ այն կողմը:

Ուղին, որ տանում էր դէպի ջուրը, անցնում էր մի թմբից, որի առաջ այդ վայրկենին բացւում էր բենութեան զեղանդկար մի պատկեր, որի հանդիսարանը Գեղամայ ծովակն էր: Այդտեղից նայելուց՝ երևում էր նրա ընդարձակ դաշտը որ, կարծես, շրջակայ լեռները յետ մղելով՝ ձգւում, տարածւում էր դէպի արեւելեան:

Հարաւ, փայլելով առաւօտեան վճիտ երկնքի տակ գորշ-կապուտ գունով. թեթեւ մկանունքները հազիւ շարժում էին խաղաղ մակերևոյթը, որ հեռուից թւում էր անշարժ ու միապաղաղ: Քանի դեռ արեւելքը չէր բոցավառում, երկնքի վրայ լողացող ամպերից՝ նրա հոսանքներում անդրադառնում էին սպիտակ մոխրագոյն շերտեր: Բայց երբ նա շառագունեց, ծովակն սկսաւ փոխել իւր պատկերը: Նրջակայ ափերը փալփում էին ոսկու պէս, մինչդեռ խոր հարաւը հեռզհեռէ ներկւում էր քրքումի գունով: Մի փոքր ևս, և ահա արեւի սկաւառակը փայլեց Մարալ-Դաղի կանաչագուրկ կատարին և իւր առաջին ճառագայթներով սկսաւ ոսկեզօծել արեւմուտքը բռնող Ձիչէկլիի բարձունքը և հարաւը փակող Իւշթեփէլերի լանջերը: Այդ տեղերից հեռզհեռէ նրա շողերն իջնելով՝ վառում էին Սեանի մեշաւոր կղզին և ապա ծովակի ընդարձակ մակերևոյթը, փոխելով նրա գեղաճուփ մկանունքները ոսկու, կամ արծաթի, և փայլեցնելով նրանց ադամանդ աչքերով:

Երկար դիտելով այդ գրաւիչ տեսարանը, Կամսարեանը յանկալձ յետ նայեց դէսլի գիւղը, տեսաւ նրա գձուճ և տխուր պատկերը, լիջեց այն ամենը, ինչոր մի օրում նա այդ տեղ տեսել ու քննել էր և նրա սրտից ակամայ դուրս թռաւ մի խոր հառաչանք.

— Ա՛խ, եթէ կարողանայի, եթէ հնարաւոր լի-նէր...

Այդ նրա բարի, գաղափարական, լեռն ձայնն էր որ բնութեան հրաշափառ տեսարանի առաջ դարձեալ իշխեց հնչելու... Բայց անձնասիրութեան լեռան ևս քնած չէր այդ ժամանակ. նա էլ իւր կողմից շշնջում էր երիտասարդի հշու տկանջին.

— Ի հարկէ, չես կարող. ի հարկէ, անհնար է... այս ժողովրդի կեանքն ու վիճակը քսան երեք դար առաջ այսպէս է նկարագրել Քսենոփոնը, քսան երեք դար յետոյ

էլի այսպէս կը նկարագրէ մի ուրիշ ֆսենովոն... այստեղ դու ոչինչ փոխել չես կարող:

Ըստ երևութիւն այդ «ես»-ին էլ վիճակուած տանել լաղթութիւնը: Որովհետեւ, երբ երիտասարդն աղբիւրին հասնելով տեսաւ նրա վիճակը,—մի յորդառատ և վճիտ աղբիւր, որ մարգկանց ծառաւը լագեցնելու համար՝ սողում, անցնում էր Այծեմնասարի, ա՞ գիտէ, քանի՜ թագուն խորշերից և հասնելով այստեղ՝ փոխանակ սրբատաշ աւազանում ցայտելու, անարգ ու անպատիւ գետահետում էր ընդարձակ տիղմի և անասունների արտաթորութեանց միջով—նա գլուխը շարժեց և ասաց:

—Ոչ, անկարելի է, մեր ուժից վեր է... դա միայն ցնորք է և բանդագուշանք. ես ի զուր եմ այստեղ ժամավաճառ լինում:

Այսպիսի որոշման գալուց յետոյ, այսուամենայնիւ աղբիւրի ականակիտ վիժակը հրապուրեց երիտասարդին: Նա տիղմի մէջ ընկած քարերը կոխելով՝ մօտեցաւ սառ ջրին, առատօրէն լուացուեցաւ, և երեսը սրբելով՝ վերադարձաւ գիւղը:

Ինքնայեւր դարձեալ եռում էր: Առաջին օրուայ եղանակով՝ նա պատրաստեց թէյը և հրաւիրելով Տանուտէրին, սկսան խմել և դրա հետ միասին էլ վայելել լոշից, պանրից և խաշած ձուերից բաղկացած մի նախաճաշ: Դրանից յետոյ Տանուտէրը լայտնեց Պետրոսին որ մի քանի ժամով մինակ պիտի ձգէ իրեն, որովհետեւ հանդուժն անհրաժեշտ գործ ունի:

—Իսկ ես կամենում էի գնալ Սեանը տեսնել և հենց այսօր էլ վերադառնալ Դիլիջան, ասաց երիտասարդը, ինքն էլ զարմանալով թէ՝ Քնչպէս կարողացաւ այդպէս շուտով իւր որոշումը լայտնել ուրիշներին:

—Էս մէ օրվայ մէջ Սեան էթալ, դառնալ ու էստիէն մին էլ Դիլիջան լիջնել դժար ա, ես քէ ինենց

եմ խէլրաթ տալում որ վանքէն դառնաս, գիշերն յանցնես մեր կուշտ. եդոյ էն բաշտան (առաւօտանց) Սիմօնովկէն տրօյկը (սալլակ) ապսպրինք, նստես էթաս:

— Շատ լաւ, այդպէս կանենք, համաձայնուեց երիտասարդը, ուրախանալով որ գործն այդպէս հեշտ է վերջանում: Յետոյ ուզեց իմանալ թէ՛ ինչո՞վ պէտք է գիւղից գնալ մինչև Սևան:

— Իստեղից ձի կըխեծնես մինչի էն ճոճ թումբը, որ մեր յառէջն է. ինոր մօտ կը լիջնաս ծովի ղրաղ. ինտեղից թիւֆէնկով ձէն կը տաս. գետմըջին կը կեալ կառնի, կը տանի:

— Զի ու հետ միասե՞ն.

— Չէ, ձին կը թորգես ծովի ղրաղ:

Կամսարեանը խնդրեց որ տանուտէրը տնից ելնելուց առաջ վարձէ իւր համար ձի. այլ և մի ընկեր, որ առաջնորդէ իրեն մինչև կղզու հանդիպակաց ափը, թէպէտ և այդ տարածութիւնը մի քանի վերստից աւելի չէր:

Կէս ժամից ամեն ինչ պատրաստ էր: Երիտասարդը թամբել տուաւ վարձու ձին իւր հետ բերած նոր թամբով, որ շատ գեղեցիկ էր և գրաւեց մօտ եղող գիւղացիների զարմանքը: Ապա մի ուսովը կախեց դաշտային մեծկալ դիտակը, իսկ միւսովն իւր նոր, գեղեցիկ հրացանը, որ առաջին անգամն էր պատեանից հանում և յետոյ ձին աշտանակելով՝ առաջ անցաւ: Առաջնորդ գիւղացին, որ միւսնոյն ժամանակ ձիու տէրն էր, գնալիք ճանապարհը ցոյց տալուց յետոյ՝ սկսաւ հետևել «աղին» ոտքով:

ՄՈՒՐԱՅԱՆ

(Վերջը հետեւեալ համարում)